

080

3 КП 2

12-95

97 h. x

1256

ՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, № 17.

Գ Դ Ն Ն

1998

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
(ԲՈՒՅԵՎԻԿՆԵՐԻ)

XIII-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

788

Թարգմ.
Վ. ՓՈԹԵՅԱՆ



3 K 172
Ղ-95

Սկան Հրատարակչություն, № 193.
ՅԵՐԵՎԱՆ — 1924.

40ՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, № 17. 23 SEP 2006

3102
Ռ-85

Սեպտեմբեր 2009

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)**

== XIII-րդ ==

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թարգմ.
Վ. ՓՈԹԵԱՆ

*Ձեռն 39
806*



256

24 JUL 2013

738a



Արտակարգ համերաշխությամբ անցած ՌԿԿ
XIII-րդ համագումարը ցույց տվեց, վոր կու-
սակցական սերունդների միջև չկա և չի կարող
պատահալու մ լինել:

Հին բուլղարական զվարդիայի ու հեթանոս-
տեմբերյան սերնդի միությունն անխախտ է:
Կուսակցական համագումարն ազդարարեց, վոր
Կոմյերիտմիությունը չի կարող չեզոք մնալ ՌԿԿ
շարքերում նկատվող մանր-բուրժուական թե-
քումների դեմ մղվող պայքարի հանդեպ:

Կուսակցական դիսկուսիայի ժամանակ մի
քանի ընկերների քարոզած «չեզոքության տե-
սությունը» համագումարի կողմից համարվեց
անհեթեթ: «Չեզոքության տեսության» քարոզ-
ներով չի կարելի դաստիարակել յերիտասար-
դության շարքերից յեկամ հաստատակամ բուլղ-
վիկ—լենինականներին:

Կուսդիսկուսիայի ժամանակ Կոմյերիտմիու-
թյունն ամուր լենինյան դիրք բռնեց: Պետք է
ամրացնել այդ դիրքը:

Տպագրական կենտրոնի հրատարակած Յերեվան, 1920



4259-91

1-3-20-6

Իրա համար հարկավոր է, վոր կոմյերիտա-
կանները կուսակցական մասսայական պրակտիկ
աշխատանքի ասպարեզ գրավեն, վոր նրանք
բոլշեվիզմի պատմությունն ուսումնասիրեն, լե-
նինիզմի եյությունը յուրացնեն. աճա այդ դիրքն
ամրացնելու հիմնական ուղիները:

Կոմյերիտությունը պետք է դառնա մար-
տական բոլշեվիզմի դպրոց: Այս դեպքում կու-
սակցական սերունդների հաշորդականությունը
(преемственность) հետադայում ևս ապահով-
ված կը լինի:

Կուսակցության XIII-րդ համագումարը յե-
րիտասարդության մեջ կատարվելիք աշխատանք-
ների վերաբերյալ իր ընդարձակ բանաձևով լու-
ծեց մի շարք ցավոտ հարցեր, վորոշելով յերի-
տասարդական շարժման և մեր յերկրի մաստադ
սերունդների կոմունիստական դաստիարակու-
թյան ամբողջ գործի հետագա ուղիները: Նախ-
ընթաց համագումարներից վոչ մեկը յերիտա-
սարդության հարցն այսպես լրիվ և բազմակող-
մանի կերպով քննության չի առել, ինչպես
այդ արեց XIII-րդ համագումարը: Կուսակցա-
կան բոլոր կազմակերպություններն ու Կոմյե-
րիտությունը պետք է այժմ արդեն մի շարք
գործնական յեզրակացություններ հանեն կու-
սակցական համագումարի վորոշումներից:

ՌԿՅՅԵՄ համար կարևորագույն նշանակու-

թյուն ունեցող այն հարցի մասին, թե միությունը
ի՞նչ չափով պետք է կազմակերպչորեն իր շար-
քերն առնի յերիտասարդական մասաներին, հա-
մագումարը հայտարարեց, թե ՌԿՅՅԵՄ իր կազ-
մով ավելի ընդարձակ կազմակերպություն է,
բան կուսակցությունը, և հրահանգեց ամբողջ
բանվոր յերիտասարդությանը միության շարքե-
րը գրավել և ընդարձակել գյուղում կազմակեր-
պությունների թիվը: Յերիտասարդական Միու-
թյունը, հենվելով առաջին հերթին՝ բանվոր յե-
րիտասարդության վրա, և դրանով իսկ, իր պրո-
լետարական ազդեցությունն ապահովելով յերի-
տասարդական ամբողջ մասսայի նկատմամբ,
պետք է թափանցի գյուղի խորքերը և դեպի իր
շարքերը գրավի տասնյակ ու հարյուր հազարա-
վոր նորանոր բատրակ, աղքատ և մեզ ամենից
ավելի մոտիկ միջակ յերիտասարդներին: Չհրա-
ժարվելով ինտելիգենցիայի ու ծառայողների
շարքերից դուրս յեկած լավագույն յերիտասարդ-
ներին ընդունելուց, Կոմյերիտությունը պետք
է ամուր պահի իր նշանները նրանց առջև, պետք
է նրանց նկատմամբ սահմանի պահանջներ ու
պարտավորություններ, վորոնց կատարման մի-
ջոցով հնարավոր լինի ստուգել, թե վորքան է
նվիրված այդ յերիտասարդությունը բանվոր-դա-
սակարգին:

Կուսակցական XII-րդ համագումարից հետո

ՌԿՅՅՄ բանվորական կորիզն ավելացել և ու
ամբացել: Այժմ նա կազմում է կազմակերպու-
թյան 40⁰/₀-ից ավելին: Այս պարագաներում
մենք կարող ենք և պետք է մեր ուշադրություն-
նը կենտրոնացնենք միությունը գյուղական մի-
ջավայրում ընդարձակելու աշխատանքի վրա:
Միության թվական կազմը մոտազա 1—1¹/₂ տ.
ընթացքում հասցնել մինչև մեկուկես միլիոնի, վորի
40⁰/₀-ից վոչ պակասը — բանվորները, 50⁰/₀ — գյու-
ղացիներ ու 10⁰/₀ մնացածները, — ահա այս է
միության մարտական լոզունգը:

Այս միանգամայն իրագործելի խնդիր է,
յեթե ի նկատի ունենանք, վոր ներկա մո-
մենտում ՌԿՅՅՄ ունի 700.000 անդամ և թեկ-
նածու: Միության V-րդ համագումարի որա-
կարգի մեջ կենտրոնական տեղ է զբաղում գյու-
ղում կատարելիք աշխատանքների հարցը: Կաս-
կած չի կարող լինել, վոր ամբողջ համագումարը
կրնթանա այն նշանաբանի տակ, թե պետք է
գյուղացիական յերիասարգության մեջ կա-
տարվելիք աշխատանքներին էլ ավելի ուշադրու-
թյան նվիրել, ել ավելի ուժեղացնել այդ ուշա-
դրությունը:

Կուսակցության առաջ իր ամբողջ հասակով
կանգնած է բանվոր և գյուղական յերիասար-
գության հսկայական անմշակ խավերի կոմու-
նիստական վերամշակման հարցը. այդ յերիասար-

սարգությունը դիմում է ՌԿՅՅՄ շարքերը, ճրգ-
տելով բավարարել իր աճող կուլտուրական պա-
հանջները և քաղաքական աշխատանքի հակում-
ները: Պետք է պարզ կերպով ասել, վոր Կոմյերիտ-
միությունն այդ հարցն առանց կուսակցության
յեռանդուն ոժանդակության լուծել չի կարող:
Ընկ. Բուխարինը կուսհամագումարում արած իր
զեկուցման մեջ կոմյերիտականների քաղաքական
անգրագիտության վերաբերյալ սուսկալի թվեր
բերեց: Քաղաքականապես անգրագետների թիվը
հասնում է 66⁰/₀-ի: Կոմյերիտմիության այս
տարի կիրառած քաղկրթության սխտեմը շա-
փազանց աննշան արդյունքներ է ավել: Յեվ
զարմանալի յել չէ. բացակայել են թե զեկա-
վարներ և թե դասական պիտույքներ:

Անհրաժեշտ է ծավալել հսկայական աշխա-
տանք նորեկ-կոմյերիտականներին դաստիարա-
կելու համար: Կուսակցությունը պիտի տա ու-
ժեր, գասագրքեր և միջոցներ:

Այդ աշխատանքը պետք է նույնպիսի կարե-
վորություն յնվ նարվածակամություն ստանա,
ինչպես լենինյան կոչի աշխատանքները: Այլա-
պես՝ մեզ լուրջ վտանգ է սպանում: Պետք է
հիշել, վոր միայն քաղաքական-կրթական աշ-
խատանքները բավական չեն: Յուրաքանչյուր
կոմյերիտական բջիջ պետք է իր կարևորա-
գույն անելիքը համարի իր բոլոր անգամներին

հասարակական աշխատանքների մասնակից դարձ-
նելը: Այս մասին շատ և խոսվում, սակայն
զեռ շատ քիչ գործ և կատարվում:

Կուսհամագումարի բանաձևը շեշտում և
Կոմյերիտմիության աշխատանքների բարդու-
թյունն ու բազմակողմանիությունը: Այդ բա-
նաձևն ընդգծում է, վոր ներկա պայմաններում
յերիտասարդության «գաղափարական կարիք-
ներն ավելի յեն աճում, քանթե զրա համար ղե-
կավար ուժեր կան»: Կոմյերիտական ակտիվիս-
տը չի կարող ինքնուրույն կերպով մշակել յե-
րիտասարդության առաջ ծառայող բոլոր բարդ
հարցերը: Ծանրաբեռնված կազմակերպչական
աշխատանքով, նա ժամանակ չունի իր կրթու-
թյան, իր զարգացման համար աշխատելու: Ծա-
վարվող պատանեկական շարժումը, միության
դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ
հարցերի մշակումը, յերիտասարդական գրակա-
նություն ստեղծելու գործը, — այս ամենը հա-
մառորեն պահանջում են կուսակցությունից հա-
տուկ կուսակցական վորակյալ ուժեր տրամադրել:

Չի կարելի հաշվի չառնել այս հարցի լուծ-
ման ղժվարությունը, վորքան կուսակցությունը
չի տառապում ավելորդ ուժերից: Սակայն ան-
հրաժեշտ և այս կամ այն ճանապարհով լուծել
այս հարցը: Անհրաժեշտ է յեղած ուժերն ող-
տագործել և այս նպատակի համար նոր ուժեր

պատրաստել: Կոմյերիտմիության՝ վորպես կո-
մունիզմի գաղտցի՝ դերն այնքան և մեծացել,
հարցերն այնպես են բարդացել, վոր լուրջ հարց
և ծագում այդ հսկայական կազմակերպության
աշխատանքները սխտեմատիկ կերպով կատարե-
լու կուսակցության և պետական մարմինների
կողմից տրամադրված հատուկ ուժերի ձեռքով:
Մինչդեռ չափազանց անբավարար ձեռով և լուծ-
վում մանկավարժական ու գիտական ուժերը
Կոմյերիտմիության աշխատանքների օտարի-
զում ոգտագործելու հարցը, վորը յերբեմն այն-
քան աղմուկ հանեց Կոմյերիտմիության շարքե-
րում: Այս բանը յերևում է թեկուզ հենց պա-
տանեկական շարժման որինակից: Համագումարը
գտավ, վոր պատկոմական կազմակերպությունն
իր ընդգրկած մաստաների թվի տեսակետից
պետք է ամենաընդարձակ կազմակերպությունը
լինի: Այն 200 հազար պատկոմները (պիոներ-
ներ), վորոնք այժմ կան, — մի կաթիլ են ծովի
մեջ: Մոտազա 1¹/₂—2 տ. ընթացքում մենք
պետք է կազմակերպության շարքերում ունե-
նանք 2—3 միլիոնից վոչ պակաս կազմակերպ-
ված սրատանիներ: Սակայն այս կիրականանա
միայն այն ղեպքում, յերբ պատրաստվի վորձ-
ված ղեկավարների բավարար կազր, և աշխա-
տանքի կոչվեն կոմունիստորեն վերամշակված
մանկավարժական ուժեր: Անհրաժեշտ է հատուկ

հասարակական աշխատանքների մասնակից դարձ-
նելը: Այս մասին շատ է խոսվում, սակայն
դեռ շատ քիչ գործ է կատարվում:

Կուսհամագումարի բանաձևը շեշտում է
Կոմյերիտմիության աշխատանքների բարդու-
թյունն ու բազմակողմանիությունը: Այդ բա-
նաձևն ընդգծում է, վոր ներկա պայմաններում
յերիտասարդության «գաղափարական կորիք-
ներն ավելի յեն աճում, քանթե դրա համար դե-
կավար ուժեր կան»: Կոմյերիտական ակտիվիս-
տը չի կարող ինքնուրույն կերպով մշակել յե-
րիտասարդության առաջ ծառայող բոլոր բարդ
հարցերը: Ծանրաբեռնված կազմակերպչական
աշխատանքով, նա ժամանակ չունի իր կրթու-
թյան, իր զարգացման համար աշխատելու: Ծա-
վավոր պատանեկական շարժումը, միության
դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ
հարցերի մշակումը, յերիտասարդական գրակա-
նություն ստեղծելու գործը, — այս ամենը հա-
մառորեն պահանջում են կուսակցությունից հա-
տուկ կուսակցական վորակյալ ուժեր արամադրել:

Չի կարելի հաշվի չառնել այս հարցի լուծ-
ման դժվարությունը, վորքան կուսակցությունը
չի տառապում ավելորդ ուժերից: Սակայն ան-
հրաժեշտ է այս կամ այն ճանապարհով լուծել
այս հարցը: Անհրաժեշտ է յեղած ուժերն ոգ-
տագործել և այս նպատակի համար նոր ուժեր

պատրաստել: Կոմյերիտմիության՝ վորպես կո-
մունիզմի դպրոցի՝ դերն այնքան է մեծացել,
հարցերն այնպես են բարդացել, վոր լուրջ հարց
է ծագում այդ հսկայական կազմակերպության
աշխատանքները սխտեմատիկ կերպով կատարե-
լու կուսակցության և պետական մարմինների
կողմից արամադրված հատուկ ուժերի ձեռքով:
Մինչդեռ չափազանց անբավարար ձևով է լուծ-
վում մանկավարժական ու գիտական ուժերը
Կոմյերիտմիության աշխատանքների ասպարի-
զում ոգտագործելու հարցը, վորը յերբեմն այն-
քան աղմուկ հանեց Կոմյերիտմիության շարքե-
րում: Այս բանը յերևում է թեկուզ հենց պա-
տանեկական շարժման սրինակից: Համագումարը
գտավ, վոր պատկոմական կազմակերպությունն
իր ընդգրկած մասսաների թվի տեսակետից
պեար է ամենաընդարձակ կազմակերպությունը
լինի: Այն 200 հազար պատկոմները (պիոներ-
ներ), վորոնք այժմ կան, — մի կաթիլ են ծովի
մեջ: Մոտապա 1¹/₂—2 ա. ընթացքում մենք
պեար է կազմակերպության շարքերում ունե-
նանք 2—3 միլիոնից վոչ պակաս կազմակերպ-
ված պատանիներ: Սակայն այս կիրականանա
միայն այն դեպքում, յերբ պատրաստվի փորձ-
ված դեկավարների բավարար կազր, և աշխա-
տանքի կոչվեն կոմունիստորեն վերամշակված
մանկավարժական ուժեր: Անհրաժեշտ է հատուկ

դասընթացքների մի ամբողջ ցանց: Գյուղում դեռ մենք ձեռք չենք դարկել պատանեկական շարժման ծավալման աշխատանքներին: Պետք է այդ կարևորագույն աշխատանքի համար պատրաստել գյուղական ուսուցչին: Կոմյերիամիությունը, վորի միջոցով կուսակցությունը ղեկավարում է պատանեկական շարժումը, պետք է ուժեղացնի այդ աշխատանքը:

Յերխատարգության մեջ կատարվելիք աշխատանքների կարևորագույն բնագավառներից մեկը բարձրագույն դպրոցն է: Կոմյերիամիությունը մինչև այժմ իր աշխատանքների ընթացքում շատ բիշ ուշադրություն է հասկացրել բարձր դպրոցին: Այժմ, յերբ կուսակցությունն անցնում է բարձր դպրոցների վերակազմության մեծ աշխատանքներին, պետք է ուղղել այդ աննորմալ դրությունը: Չպետք է մոռանալ, վոր բարձրագույն դպրոցներում կոմյերիտականների, վորպես կուսակցության առաջին սզնականների՝ դերը շատ մեծ է: Մինչդեռ բարձրագույն դպրոցների ուսանող կոմյերիտականները շատ ծանրը վիճակում են գտնվում: Նրանք ընկնում են անասողջ, արատադրությունից ու գործնական աշխատանքից կտրված միջնուրտի մեջ, շատանալով այդ պարագաներում սզնություն է չարժանանալով բավարար ուշադրության իրենց կազմակերպության կողմից: Նկատված են գեղքեր, յերբ բարձրագույն դպրոցի կամ բանֆակի

ուսանող կոմյերիտականը, հակառակ իր բոլոր ցանկությունների, չի կարողանում ստանալ վորևէ գործնական շոշափելի աշխատանք:

Անվիճելի յե, վոր բարձրագույն դպրոցների բջիջներում ամենից հաճախ բացակայում են աշխատանքների կանոնավոր բաշխում և այդ աշխատանքների կատարման հսկողություն: Միության կազմակերպությունները պետք է բմբնեն բարձրագույն դպրոցի ուսանող կոմյերիտականի վիճակի ամբողջ ղժվարությունը, պետք է սզնության հասնեն նրան, այնպես կազմակերպելով աշխատանքը, վոր ապահովվի կոմյերիտականի ու միության գործնական աշխատանքների փոխադարձ սերտ կապը, և, մյուս կողմից, շաղկապելով միության աշխատանքները ակադեմիական գրադմունքների հետ:

Սրանք են ՌԿՅՅՄ՝ XIII-րդ համագումարի վորոշումներից բղխող կարևորագույն անելիքները, վորոնց իրականացմանը պետք է անցնի կոմյերիամիությունը, աշխատելով կուսակցության ամուր և ամենորյա ղեկավարության տակ:

Մարտական բուլշեվիզմի գրոշակի տակ, ձեռք ձեռքի հին բուլշեվիկական գվարդիայի հետ ու նրա ղեկավարությամբ, կոմյերիամիությունն էլ ավելի առաջ կընթանա իր մեծ նպատակի՝ մատող սերնդի մարտական-կոմունիստական դաստիարակության—իրականացման ուղիով:

Հիշի՛ր մանր-բուժուական ազգեցությունը,
վոր քափանցում է ականջները, աչքերը, անկասելի
կեպով քափանցում է սիրտն ու հոգին: Պահպանի՛ր
այդ ազգեցությունից ամենից առաջ մեր յերիսա-
սարգությունը,

վորին՝ մեր ամբողջ ուշադրությունն ու սերը:

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ.

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԿ. ԲՈՒՆՍՐԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ԿԱՆԳՆԱԾ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԻՐ ԱՄԲՈՂՋ
ՀԱՍԱԿՈՎ.

Ընկերներ, ըստ պատվերի և սկզբնական յեն-
թաղրության յերիտասարգության հարցը պետք
է զրվեր կուսակցության առաջ պատշաճ ամ-
բողջությամբ: Թեև կուսակցությունը մինչև
այժմ յերիտասարգության հարցին նվիրել է
վորոշ ուշադրություն, սակայն փոշ այն ծավա-
լով, ինչպես այդ ցանկալի կը լիներ յերիտա-
սարգության տեսակետից: Մյուս կողմից՝ պետք
է նկատել, վոր այն արտաքին արարողությունը,
վոր տեղի ունեցավ համագումարի ժամանակ
սովորական զինվորա-բանվորական շարանանդես-
ների (парти) փոխարեն, — մեծ շարանանդեսն
ու պատկոմների մարտական մկրտությունը, —
ինքնըստինքյան փոքրիկ, բայց վերին աստիճա-

նի նշանակալից փաստ է, և այդ խնդիրը կանգնած է մեր կուսակցութեան առաջ իր ամբողջ ծավալով:

Ընկերներ, ինձ թվում է, վոր մեր կուսակցութեան անդամներից յուրաքանչյուրը պետք է հասկանա, վոր յերիտասարդութեան վերաբերմամբ ունենալիք մեր ազգեցութեան և յերիտասարդութեան մեջ գործող ու աշխատող բոլոր կազմակերպութեան շրջանների հարցերն առաջնակարգ նշանակութիւն ունեն մեր զարդացման հիմնական հեռանկարների տեսակետից: Յեթե վերջին ժամանակները մեր կուսակցութեանը մտահոգում եյին այնպիսի հարցեր, ինչպես, որինակ, մի կողմից՝ սոցիալիստական կուտակման, և մյուս կողմից՝ մասնավոր կապիտալի կուտակման հարաբերութեան հարցը, յեթե այդ հարցը մեզ անհանգստացնում էր այն պատճառով, վոր նրա լուծումից է կախած մեր հեղափոխութեան բախտը (սոցիալիստական եկոնոմիկան կը հաղթի, թե՞ կապիտալը, վոր կը սկսի մեզ հարվածել առևտրական կապիտալի ձեռով), ապա, մյուս կողմից՝ մեծ իրավամբ կարելի յէ ասել, վոր «ո՞վ ո՞ւմ կը հաղթի» հարցի լուծումը կախած է նրանից, թե ինչպիսի մարդիկ կը հասունանան, թե ինչպիսի հրամանատարական կազմ կունենանք մենք մոտագատարիներում մեր հասարակական կյանքի բոլոր

ասպարեզներում: Ընկ. Լենինը բոլորովին վոչ պատահական ձևով, յեթե չեմ սխալվում՝ XI-րդ համագումարում, պնդում էր, վոր մենք ամենայուրը ձեռով դեմ ենք առել մարդիկ ընտրելու հարցին:

Սակայն, յեթե ընկ. Լենինի այդ տեսակետն այնպայման ճիշտ է, ապա մենք բոլորովին պարզ կարող ենք ասել, վոր այն հարցը, թե ովքեր կը կանգնեն մեր բոլոր հրամանատարական դիրքերում, հետևապես այն հարցը, թե ինչպես կը հղկվի, ինչպես կը վերամշակվի, կը կրթվի, կը մարդվի մեզ հաջորդող սերունդը և սրան հաջորդող սերունդը, այս հարցը դրված է այն հարցերի ամբողջ գումարի կենտրոնում, վորոնց լուծումից է կախված կապիտալիզմի և սոցիալիզմի պայքարի յելքը: Յե՛վ անա, յես պետք է համագումար յեկած ընկերների ուշադրութիւնն ամենից առաջ դարձնեմ այն բանի վրա, վոր մեր առաջ իր ամենալայն ծավալով կանգնած հարցը մանկավարժական հարց է, բայց և միևնույն ժամանակ՝ վերին աստիճանի կարևոր քաղաքական հարց: Այս հարցն այժմ չափազանց բարդ հարց է: Իսկապես, չե՛վոր մենք այժմ հարկադրված ենք հողալ վորակյալ պրոֆեսորներ պատրաստելու, մեր պրոֆեսորներն ունենալու մասին: Պետք է հոգանք այն մասին, վորպեսզի մեր հսկայական կրթական

լարարատորիաներից զուրս զան մեր կարմիր մասնագետները. պետք է հոգանք, փորպեսզի պատշաճ ձևով մշակվի այն մարդկային նյութը, վորն անհրաժեշտ է սոցիալական հասարակություն հասուցանող մեր միջին գործիչներին պատրաստելու համար: Այնուհետև պետք է կանոնավոր կերպով վարել մատաղ յերիտասարդության կրթության գործը, այս բառի նեղ իմաստով: Յե՛վ, վերջապես, մենք պետք է հոգանք այն մասին, փորպեսզի կանոնավոր ուղղություն և ընթացք արվի մեր ամենալայն յերիտասարդական խավերի, բոլորովին յերիտասարդ սերնդի մշակման գործին:

Հարցի այս բարդությունը, վոր բղխում է մեր՝ տիրող կուսակցության դիրքից, անդրադառնում է անհամար թվով չափազանց բարդ հարցերի վրա: Յես կուսակցական համագումարի ուղարկությունն եմ հրավիրում այն բանի վրա, վոր մեր կուսակցությունն այժմ այնպիսի վիճակումն է գտնվում, յերբ այդ աշխատանքի բազմաթիվ բնագավառներում նա կարող է ձեռքից թողնել ղեկը, նա կարող է անկարող գտնվել ոգաադարձելու այն հսկայական նյութը, վոր նա անհրաժեշտաբար պետք է մշակի, փորպեսզի կավար ուժ: Ընկերներ, յես ձեզ միայն մի բանի որինակներ կը բերեմ ամենատարբեր բնագավառներից: Մենք այժմ ունենք բարձրա-

գույն գպրոցներ, ունենք այնպիսի փորակյալ հիմնարկություն, ինչպես՝ կարմիր պրոֆեսորների ինստիտուտը: Ինստիտուտի նպատակն է՝ իսկական գիտական աշխատանք կատարել:

Ի՞նչ կարծում եք, թե մեր կուսակցությունն այժմ ի վիճակի՞ յե հետևելու այդ աշխատանքներին: Յես պետք է ասեմ, վոր կհանգամաններից վոչ մեկը, Քաղբյուրոյի անդամներից վոչ մեկը, վոչ մի կուսակցական կազմակերպություն այդ գործին չեն հետևում, և չեն կարող հետևել: Մեզանում ստեղծվում են ամբողջ գիտական ուղղություններ: Հրավիրվում է, որինակ, հոգեբանության մասնագետների վորևէ համագումար, այդտեղ հանդես են գալիս ու գործում ամբողջ խմբեր, վորոնք խոսում են մարքսիստների անունից. բայց հարցրեք մեր ղեկավար խմբից և մեր կհ ու ամբողջ կուսակցությունից, — վորևէ մեկը հետևում է աշխատանքների այդ ճյուղին. յես կը պատասխանեմ, վոր վոչ մի մարդ չի հետևում: Մինչդեռ այդ մարդկանց աշխատանքի հետևանքները տարածվում են ավելի հեռուն, նրանց միջոցով դատարակվում ու ստեղծվում են ամբողջ գպրոցներ և ուղղություններ: Մենք ունենք գպրոցական հարց, այն գպրոցների հարցը, վորտեղ սովորում է մեր յերիտասարդությունը: Յերբ յես խոսում եմ յերիտասարդական գպրոցի և մեր

20039 (88 806) 1380-62



4259-91

կուսակցական գաղտնյան մասին, ապա դուք կարծում եք, թե մենք այդ գաղտնյաներին ամեն ուղղությամբ կ'արող ենք հետևել և հետևում ենք: Չարաշար կը հիասթափվեք դուք: Այդ հողի վրա յեբբեմն զարմանալի կուրյոզներ են տեղի ունենում: Նրանցից մեկի մասին յես կը պատմեմ ձեզ. իմ ձեռքումն են կուսակցության Մոսկվայի կոմիտեյի (ՌեկլՄե) պրոպագանդիստական գործունեյության նյութերը. այնտեղ մի հողված կա մանկավարժական նոր մեթոդի մասին, վոր կոչվում է «տալգենիզմ»: Այդ մեթոդը մի հատուկ յեղանակ է, վորով մշակման է յենթարկվում հասարակությունը: Խնչ է այդ մեթոդի եյությունը: Հեղինակն ասում է.

«Մենք մտադիր ենք այս հողվածով բնորոշել այն մանկավարժական նոր մեթոդը (հեղինակն է՝ Ա. Գ. Ռիվին), վորը հիմնված է հաղորդակցությունը (общение) իբրև կրթական պրոցեսի գործոն ըստ ամենայնի ոգտագործելու վրա, յեվ վորն իրականանում է գուգային միությունների ձեով ունեցող անձնական հաղորդակցություն կազմակերպելու միջոցով»: Ահա, այս «գուգային միությունների ձեով հաղորդակցության անձնական մեթոդը» հետևյալն է. այն ընկերները, վորոնք մեր շարքերն են մանում լենինյան կոչի հետևանքով, կենթարկ-

վեն մանկավարժական մշակման ըստ տալգենիզմի, այսինքն՝ տաղանդի ու հանճարի ընտրանքի, հետևյալ ձեով. մի գուգին հարկադրում են զբաղվել, որինակ, յերկրաչափությամբ, իսկ մյուս գուգին — ուսումնասիրել յերշիկի արտադրությունը. հետո անդամների խաչաձև տեղափոխություն (перекрецивание) են կատարում. յերշիկագործը հաղորդակցության ժամանակ դառնում է յերկրաչափ, իսկ յերկրաչափը — յերշիկագործ, և այդ՝ յերկրաչափությունից յերշիկին և յերշիկից յերկրաչափության անցնելու ժամանակ յերևան է գալիս նրանց հնարագիտությունը: Հիմա յերևակայեցեք, վոր գալիս են մեզ մոտ մորթավոր բանվորներ և կամենում են կոմունիստներից իմանալ այն, ինչ վոր պետք է նրանց, և այդ բանվորներին հակադրում են այդ «գուգային միությունների ժամանակ անձնական հաղորդակցության մեթոդով» կազբիլ կամ միևույեա պարել: Խնչ գուրս կըզա դրանից:

Մինչդեռ այս — պաշտոնապես հրատարակված նյութ է: Յես կը բերեմ մի շարք այլ որինակներ: Մեզանում այժմ զբված է գեղարվեստական գրականության հարցը, վորի միջոցով գաստիարակվում է մեր յերիտասարդությունը: Միթե մեր կենարոնական հիմնարկություններն է վիճակի յեն հետևելու դրան: Վնչ. կուսակ-

ցական հիմնարկութիւնները նույնպէս հնարա-
վորութիւնն չունեն: Կուսակցական գիծը լայնա-
կայում է:

Այսպիսով, շոշափելով բոլորովին տարբեր
հարցեր, մենք ստանում ենք իրերի այնպիսի
գրութիւնն, վորը կարող է սպառնալից գառնալ:
Քանի վոր կուսակցութիւնը կարող է կորցնել
դեկը, կուսակցութիւնից անկախ կարող են
զարգանալ մի ամբողջ շարք հոսանքներ, վորոնց
կուսակցութիւնը չի կարող հետևել, և վորոնք
կրննթանան կուսակցութեան գրոշի տակ այդ
հոչակավոր «տալգենիզմի» հետ միասին: Մեզա-
նում գեպքեր են յեղել, յերբ կուսակցութեան
կողմից այդ աշխատանքներին հետևելու համար
ուղարկված ընկերն անգոր է հանդիսացել նոր
պահանջների ու հարցերի հանդեպ, վորովհետև
աշխատանքը չափազանց ընդարձակվել, մեծա-
ցել է: Հաճախ բարձրագույն դպրոցներում մեմ
այդ ընկերներին, — յեթե արտահայտվենք վոչ
այնքան պարլամենտորեն, — քչել են խմբակնե-
րից, վորովհետև սովորողներն ավելի յեն իմա-
ցել, քան ուղարկվող ընկերները: Այդ, իհարկե,
նշան է, վոր մեր գործը հսկայական չափով ա-
ճում է: Մենք փոխադրվել ենք վոչ միայն
յերկրորդ, այլ, գուցե, իններորդ կամ տասնե-
րորդ դասարանը: Սակայն, մյուս կողմից, կու-
սակցութիւնը պետք է հաշվի առնի այս հան-

գամանքը, քանի վոր, յեթե մի շարք բնագա-
վաններում զարգացումն ընթանա կուսակցու-
թիւնից անկախ, առանց նրա վերահսկողու-
թեան, ապա մենք կարող ենք բոլորովին ան-
սպասելի կերպով, մի վորոշ ժամանակից հետո,
կանգնել մի շարք խոշոր խեղաթյուրումների
առաջ, վորն ուղղելը չափազանց դժվար կը
լինի: Իսկ վորովհետև մեր ամբողջ փորձը մեզ
ցույց է տալիս, վոր ամեն մի այդպիսի խեղա-
թյուրում ձգտում է, հատկապէս պատմական
կրիտիքական շրջանում, միանալ, կապվել վո-
րոշ քաղաքական տենդենցի հետ, ապա մենք կա-
րող ենք այստեղ ստանալ վորոշ քաղաքական
հոսանք, վոր ուղղակի մեր կուսակցութեան դեմ
կը գնա: Ընդհանրապէս կարելի յե ասել, թե
պահանջներն այնքան են զարգացել, յերիտա-
սարկութեան վերաբերյալ հարցերն այնքան են
բարդացել, և աշխատանքն այնքան է շեր-
տավորվել, վոր կուսակցութիւնը պետք է ըմ-
բռնի մեր առաջ ծառայած հարցի ամբողջ բար-
դութիւնը և լուրջ ուշադրութիւն դարձնի
գործի այդ կողմի վրա:

Միշտել Երզնկ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՐՅԸ

Ընկերներ, յերկրորդ հարցը, վոր յես կա-
մենում եյի այստեղ ընդգծել, այդ սերունդնե-

ըի հարցն է: Ինչպես յես ասացի իմ ճառի հենց սկզբում, մենք պետք է հոգ տանենք վոչ միայն յերիտասարդության, այլև պատանիների մասին:

Յե՛վ այստեղ, ինձ թվում է, մենք, վորպես հաղթական բանվոր դասակարգի կուսակցություն, պետք է հասկանանք, վոր վորքան մենք իջնենք բառ հասակի, այնքան ավելի յեռանդով պետք է մեր ազդեցության տակ առնենք ավելի լայն սոցիալական շրջաններ: Մենք այստեղ վոչ մի գեպքում չենք կարող կանգնել այն տեսակետի վրա, վոր բոլորովին բնական, ճիշտ, համաչափ և նպատակահարմար է այն յերկրներում, վորտեղ բանվոր դասակարգը գեռ իր ձեռքը չի վերցրել իշխանությունը, և վորտեղ նրանց հիմնական նպատակն ու անելիքն է՝ կազմակերպել և կովի ասպարեզ նետել այդ կովի համար անմիջականորեն պիտանի ուժեր: Մեր անելիքն անհամեմատ ավելի բարդ է, քանի վոր վոչ միայն մեր առաջ զբված է այնպիսի կադրեր ստեղծելու խնդիրը, վորոնք կարող են հենց այժմ, ամենակարճ միջոցում, նետվել այս կամ այն քաղաքական, տնտեսական կամ գաղափարական հրամանատարական դիրքը, այլև մենք պետք է մեծազույն սոցիալական հիմքը գնենք սպազա մարդկային հիմնական կապիտալ ստեղծելու համար: Յե՛վ այդ տեսակետից մենք չենք կարող ամենայնրիտասարդ սերունդների նկատ-

մամբ սահմանափակվել նրանով, վոր կազմակերպենք միայն բանվորներին: Մենք մեր ազդեցության տակ պետք է առնենք, վորքան հնարավոր է, ավելի մեծ թվով ազգաբնակչություն, վորչափ հարցը վերաբերում է ամենափոքր հասակներին: Ահա այս գործի վրա պետք է դարձնել կուսակցության ուշադրությունը: Մինչգեռ այս ասպարիզում մեզանում գործն այնքան էլ հաջող չէ:

Յեթե ճիշտ փոխհարաբերությունն այն է, վոր, որինակ, պատանիների շրջանում մենք պետք է կազմակերպենք բացի պրոլետարներից, և մյուս տարրերին, ուստի և այստեղ պրոլետարների տոկոսը կարող է ցած լինել, այնինչ՝ որինակ, կուսակցական կազմակերպության մեջ, վոր սպահովում է մեր ղեկավարությունը, պրոլետարների տոկոսն առավելագույնը պետք է լինի,— ապա մեզ մոտ փաստական գրությունն ուղղակի հակառակն է: Մեզանում, որինակ, ամենաստորին կազմակերպությունը— պատկուժական կազմակերպությունն է, վորի մեջ պրոլետարական պատանիները բարձր տոկոս են կազմում, և մեր պատկուժների մեջ կա մի հոսանք, վոր կարծում է, թե, նախ պետք է կազմակերպել բոլոր պրոլետարական պատանիներին, և միայն զրանից հետո կարելի յե ձեռնարկել գյուղացիների և այլ լատվերի պատանիների,

քաղաքի աշխատավոր խավերի պատանիների, կազմակերպմանը: Այս բացարձակապես սխալ տեսակետ է: Յեթե մենք մեր կազրային կազմի ստեղծման հարվածային հարցի չափ կարևոր չհամարենք այն ավելի խոշոր հարցը, վորը մարդկային նյութի մշակման—գաստիարակման ասպարիզում նույնն է, ինչ վոր տնտեսութեան մեջ—մեր ելեքարոֆիկացիոն կայարանների կառուցումը, յեթե մենք այդ շունենք, ապա մի քանի սերունդներից հետո շատ անախորժ հետեւանքների առաջ կանգնած կը լինենք:


Այս գիտությունը մի քանի ուղղութիւններով վերաբերում է և յերիտասարգական Միութեանը: Յերիտասարգական Միութեան անդամ ընկերները հրաշալի կերպով գիտեն, վոր նրանք պետք է իրենց շարքերը գրավեն գյուղացիական յերիտասարգութեանը, սակայն նրանց փաստական ուժերն այժմ այնքան սահմանափակ են, վոր այդ տեսակետից ես գրութեանն առանձնապես միտիթարական չե, թեև Կոմյերիտմիութեան ղեկը, ինչպես կը տեսնենք հետագա գրութեանից, հաճախ գյուղում (ղժբախտաբար) ավելի կարևոր է, քան մեր կուսակցական բլիժներինը:

Մեր առաջ գրված են շատ բարդ հարցեր: Մեզ անհրաժեշտ է վերին աստիճանի նուրբ, բազմակողմանի ձևով մտտենալ դործին: Մեզ հարկավոր են մարդիկ, վորոնք կարողանան բա-

վարարել աշխատանքի այդ բնագավառների պահանջներին, սակայն մեզ անհրաժեշտ է միասնական ղեկավարութեան, մեր կուսակցութեան ղեկավար ինստանցիայից յեկող ղեկավար թեկ:

Միայն այն ժամանակ մենք կարող կը լինենք պահելու և ուղիղ ճանապարհով տանելու ամբողջ հասակային շղթան, յերբ ապահովենք մեր կուսակցութեան, Կոմյերիտմիութեան, պատկոմական կազմակերպութեան և պետական ու այլ տեսակի մի ամբողջ շարք հաստատութեանների կանոնավոր փոխհարաբերութեանը, վորոնք գրագիտւմ են նույն և նման աշխատանքներով:

Կրկնում եմ, ընկերներ, այդ աշխատանքը չափազանց դժվար է: Յեթե մեզանում, մեր սեփական կուսակցութեան մեջ, ինչպես ցույց տվեց տեղի ունեցած դիսկուսիան վիճաբանութեան ժամանակ մեծ չափով ձգտումն եր նկատվում մեր կուսակցութեանը հասակի տեսակետից ձերերի ու յերիտասարգների բաժանելու, ապա մի կարծեք, վոր այդ յերևույթը չկա և մյուս կազմակերպութեանների մեջ: Այդ յերևույթը նկատվում է, ի հարկե, յուրահատուկ ձևերով, և Կոմյերիտմիութեան մեջ, և նույնիսկ, վորքան ել այդ տարրինակ է, պատկոմական կազմակերպութեան մեջ:



ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԱԶԳՆ ԱՄԵՆԻՑ ԱՎԵԼԻ ՈՒՐԱՍԱՍ-
ՅՆՈՂ.—ՊՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅՈՒՆԸ

Այս ընդհանուր դիտողութիւններէց հետո՝
յես անցնում եմ թեզիսներէ առաջին մասին—
պատկոմական հարցին: Այդ հարցն առաջին ան-
գամ ե քննութեան առնվում այնպիսի կուսակ-
ցական կազմակերպութիւններէ մեջ, ինչպիսին
մեր կուսակցական համագումարն է:

Յես պետք է մի փոքրիկ, այսպէս ասած՝
անձնական բնույթի դիտողութիւն անեմ. պետք
է ասեմ, վոր յեթե մեզ, կոմունիստներն հա-
մար անհրաժեշտ է մի առանձին հոգեբանական
մղում, վորպեսզի մենք կատարենք պատմութեան
կողմից մեր ուսերին դրված աշխատանքը, ապա
ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդ հոգե-
բանական մղումն առաջին հերթին ազդում է
այն ժամանակ, յերբ մենք տեսնում ու շոշա-
փում ենք այդ աշխատանքի իրական արդյունք-
ները, վորպէս ինչվոր մի նոր բանի կտոր:
Յե՛վ, ահա, յես պետք է ասեմ անձնապէս իմ
նկատմամբ, վոր այն բոլորից, ինչ վոր յես ա-
ռիթ եմ ունեցել տեսնելու այս վերջին տարի-
ներում, թերևս ամենախոստամալիցը, ամենա-
նշանակալիցը, կոմունիստական աչքն ամենից
շատ ուրախացնողը,—պատկոմական կազմակեր-

պութիւնն է. վոչ թե նրա համար, վոր հաճելի
յե տեսնել նրանց շարահանդեսը (парад), վոր
այդ ուղղակի մի գեղեցիկ, մի եստեափքական
տեսարան է, այլ հատկապէս այն պատճառով,
վոր այստեղ ստեղծվում է այնպիսի հարաբերու-
թիւն, այստեղ հասունանում է այնպիսի հոգե-
բանութիւն, վորոնք հանդիսանում են հեղափո-
խութեան ընթացքում մեր ձեռք բերած արդյունք-
ներէց ամենակայունը:

Յեթե առաջ, մինչև հեղափոխութիւնը, մենք
շատ հաճախ գործի դրութիւնն այնպէս էյինք
պատկերացնում, թե հեղափոխութիւնից հետո
համարյա անմիջապէս, մեր բարեկեցութեան
ծուռ գիծը (кривая) կը սկսի բարձրանալ, ապա
մենք այդ հարցում սխալվում էյինք: Մենք
տեսնում ենք, վոր ամենին այդպէս չէ: Իսկա-
պէս, ահա 6-7 տարի յե, ինչ իշխանութիւնը
մեր ձեռքում է. շուտով թերևս մոտանանք ել,
թե վեր յերորդ տարին է, վոր իշխանութեան ղեկը
մեր ձեռքին է, այնուամենայնիւ, մենք դեռ շատ
հեռու յենք արտադրութեան նախապատերազ-
մական վիճակը բնորոշող թվերից, արտադրական
ուժերի զարգացման նախապատերազմական մա-
կարդակից, և այդ տեսակետից, յեթե համեմա-
տելու լինենք նախկին և այժմյան մեր դրու-
թիւնը, մենք առայժմ դեռ վոչինչ ձեռք չենք
բերել, բացի բացասական հետեանքներից: Սա-

կայն մենք մի այնպիսի բան ենք ձեռք բերել, վոր արժի մնացած բոլորին, վորովհետև նա, վերջին հաշվով, ապահովում է մնացած բոլորը, նա մեզ համար թանգ է այն պատճառով, վոր վերջին հաշվով, վոչ միայն հասնում այլ և անցնում է նախապատերազմական թվերից:

Յե՛վ այդ նվաճումը—նոր տիպի մարդիկ ստեղծելն է. մենք ստեղծում ենք նոր տիպի մարդիկ, նոր հարաբերություններով, նոր փորձառություններով, նոր ձգտումներով, նոր հոգեբանություններ ու նոր գաղափարախոսական կառուցվածքով, այդ մեր հիմնական նվաճումն է, վոր ապահովում է մեր զարգացումը և ապագայում յերկար տարիներով:

Յես ձեզ նեղություն չեմ պատճառի մեծ բանակություններ թվեր մեջ բերելով: ՌԿՅՅՄ V-րդ համագումարին, այսինքն՝ 1922 թ. հոկտեմբերին, պատկոմական կազմակերպության շարքերում կար ընդամենը 4 հազար պատանի. 1924 թ. մայիսի 1-ին այդ թիվը հասել է 200 հազարի: Ինարկե, ինքնըստինքյան այդ թիվը դեռ շատ ու շատ փոքր է, սակայն հարաբերությունների դինամիկայի տեսակետից, աճեցման տեսակետից, այդ, այնուամենայնիվ, մի բան է: Յես ինձ թույլ եմ տալիս մի քանի խոսք ասել պատկոմների աշխատանքի բնույթի մասին: Դրժբախտաբար յես հնարավորություն չունեմ մեր

կուսակցական համագումարում ոգտագործելու այն նյութը, վոր մենք հավաքել ենք: Յես խորհրդակցություններ եմ գումարել պատկոմների, գյուղական կոմյերիտականների և գործարանների ստորին խավի կոմյերիտականների հետ միասին, և ձգտել եմ վոչ միայն պաշտոնական, այլ և այնպիսի տեղեկություններ ստանալ, վորոնք ցույց տան մեր ստորին բջիջների ներքին կյանքը: Թույլ ավեք մի յերկու խոսք ասել ձեզ բջիջներից մեկի մասին, ցույց տալու համար պատկոմական կազմակերպությունների աշխատանքի պատկերը: Նախկին Պրոխորովի գործարանում աշխատանքների սկզբում բանվորական տներում ապրում էր մոտավորապես 31¹/₂ հազար պատանի: Սկզբում կազմակերպում են 180 հոգու, բայց հետո դեկամբար ուժերի և միջոցների բացակայություն պատճառով ստիպված են լինում միանգամից այդ թիվն իջեցնելու 80-ի: Այն կիսանկուղը, վոր նրանք զբաղեցնում են, մոտավորապես 2 քառ. սաժեն տարածություն է ունենում: ՌԿՅՅՄ բջիջը լավ է վերաբերվում, իսկ, ինչպես ասել է մի ընկեր, «ՌԿԿ բջիջը բոլորովին լուրջ չի վերաբերվում» նրանց: Անկուսակցական բանվորներն սկզբում մասամբ դրական վերաբերմունք են ցույց տալիս, բայց բանվորների մեծամասնությունը, և հատկապես կանայք, սպասողական դիրք են բռնում, վոր-

պեսզի տեսնեն, թե ինչ է դուրս գալու այդ ամբողջ պատմութիւնից: Այնուհետև, կազմակերպչական աշխատանքներից հետո, հարց է ծագում նրանց ընտրանքի (ՕՏՕՐ) մասին: Նրանք սկսում են ընտրանքի ժամանակ կիրառել խիստ կանոններ, թերևս վոչ պակաս և նույն իսկ ավելի խիստ կանոններ, քան մեր վերջին կուսակցական զտման ժամանակ: Ընտրանքի ժամանակ հացնում էլին. «չէս ծխում արդյոք», «խուլիզանություն չէս անում արդյոք»: Ի՞ դեպ՝ տեղի յե ունեցել մի դեպք, յերբ մի պատկոմական կազմակերպութեան մեջ քիչ է մնացել մեր մի պատասխանատու ընկերով աղաներից մեկի հոգին հանեն նրա համար, վոր նա աղախնին ուղարկել է իմանալու, թե յերբ է տեղի ունենալու ինչվոր սայոնական ժողով: Իբր թե՛ դու ինչ աշխատավոր ես: Այդ յեղանակով կատարվեց ընտրանքը: Պատկոմական կազմակերպութեան ներսում շատ լուրջ կերպով գրվել է կարգապահութեան հարցը, և պետք է ասել, վոր շատ հաճախ պատկոմներն իրենց կարգապահութեամբ և իրենց կազմակերպվածութեամբ դերագանցել են կոմյերիտական կազմակերպութեաններին: Այնուհետև նրանք սկսեցին ել ավելի զարգացնել իրենց գործունեութիւնը, կազմակերպեցին յերկրորդ ստաիճանի խմբակ, և իրենց ազդեցութեան սակ առան մանկատունը:

Այժմ նրանք զբաղված են պատկոմական տան կազմակերպչական աշխատանքներով: Մի քիչ ամբարտաւրվելուց հետո նրանք սկսեցին իրենց շոշափուկները տարածել դեպի ծնողները՝ նրանց վրա ազդելու նպատակով. այս հանգամանքը չափազանց կարևոր է, քանի վոր նոր պայքարի ամենահիմնական արմատը—այդ ժամանակակից ընտանիքի կազմակերպման հարցն է:

Յեվ այդ ասպարեզում մենք ունենք պատկոմական կազմակերպութիւններ, վորոնք իրենց թույլ թաթիկներով կտրտակում են այդ ընտանեկան կազմակերպութեան մեջ տիպող ինն յարաբերութիւնները, այսինքն՝ դանդաղ փորում են ինն ուժիմի բոլոր նողկանքների ամենահետադիմական ամբողջի հիմքերը: Նրանք սկսեցին իրենց ղեկավարներին հետ միասին ծնող-բանվորների ժողովներ հրավիրել. ծնողների տրամադրութիւնն սկզբում սպասողական էր. հետո նրանք սկսեցին հետզհետե ավելի ու ավելի սիրով հաճախել այդ ժողովները: Ի՞նչ առաջացավ այդ հոգի վրա. յերբեմն այդ փոքրերին ծեծում-ջարդում էլին այն պատճառով, վոր նրանք պատկանում են պատկոմական կազմակերպութեան: Պատկոմներն սկսեցին համառորեն պայքարել ծեծի դեմ. այս նպատակով կազմակերպվեց հնգյակ՝ գործարկոմների, կոմյերիտական-դերի և պատկոմների ներկայացուցիչներից, վո-

րոնք շրջում էյին իրենց յերեխաներին ծեծող բանվորներին տները, կշտամբում էյին նրանց, յերբեմն ել գատի յենթարկում: Այսպիսով ստեղծվում է նոր տիպի հարաբերություն:

Յեկավ այս տարվա Չատիկը. ծնողներն սկսեցին ստիպել իրենց յերեխաներին յեկեղեցի հաճախել: Յեվ, ահա, Չատիկից մի քանի ուր առաջ մի քանի տասնյակ յերեխաներ հավաքվեցին կիսանկուզը. նրանք հեռացան իրենց տնից, այլևս չէյին վերագառնում և պայքարում էյին ծնողների դեմ, կատարված փաստի առաջ կանգնեցնելով նրանց. (ծափահարություն):

Այնուհետև մեր կուսակցության կյանքում տեղի ունեցավ այնպիսի մի հակայական գեպք, ինչպես լենինյան կոչը: Պատկոմները, այդ փոքրիկ կտրիճները, շատ գեպքերում ազդեցություն էյին գործ դնում իրենց ծնողների վրա, քաշ էյին տալիս դեպի կուսակցություն, ստիպում էյին անդամագրվել, և ամեն բան անում էյին, վորպեսզի տրամադրեն նրանց մտնելու կուսակցության շարքերը. (ծափահարություն):

Այսպիսով դուք տեսնում եք, վոր այդ միանգամայն անտեսանելի աշխատանքը միայն արտաքին գեկորներով ու նշաններով չի արտահայտվում, այլ նույնպես է կենցաղային այն ամենահետադիմական վանդակի այլասեռման, վորը հին հարաբերությունների պատվարն է չանդիսանում:

Աշխատանքն սկսվեց, և դուք տեսեք, թե ինչ հնարամտություն է պահանջվում այդ փոքրիկ յերեխաներից: Իլյիչի մանվան առթիվ կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը հրապարակ նետեցին անապաստան անձանց ոգնեու լողունը:

Գործարկումները տրամադիր են շարունակ փոքր խնայողաբար ծախսել, սգնել միայն իրենց գործարանի կարիքավորներին. «ուրիշներին» համար նյութական միջոցներ չեն լինում: Այդ խելացի ու բարի ազաներն ու աղջիկները գործարկումներից ծածուկ կազմակերպում են անապաստան յերեխաների ոգնություն: Յեթե դուք յերբեկեցե կարգայիք, թե ինչ գրության մեջ են գտնվում մեր այն «մանկավարժական հիմնարկությունները», վորտեղ ապրում են անխնամ ու անապաստան յերեխաները, ձեր մագերը բիզբիզ կը կանգնեյին. պատճառն այն է, վոր մենք չունենք այնպիսի մանկավարժներ, վորոնք կարողանան մերձենալ այդ յերեխաներին, վորոնց մի քանի տարիների ընթացքում փչացրել են վողոցը, առևտուրը, սպեկուլացիան, պոռնիկությունն ու մյուս բացասական պայմանները: Պատկոմները, այդ փոքրիկ մարդիկ լավ գիտեն մանկան հոգեբանությունը. նրանք, ինչպես ցույց տվեց փորձը, հաճախ վկայալ մանկավարժներից ավելի լավ են մերձենում այդ անապաստան յերե-

խաներին: Ինքնին հասկանալի չե, վոր ամեն տեղ
գրությունն այնպես լավ չե, ինչպես յես ասում
եմ, սակայն այն հանգամանքն, վոր պատկոմական
կազմակերպությունները այս ուղղությամբ են
գարգանում, բավական ե, վոր մենք չարհամար-
հենք այս գործը, ինչպես անում են այդ փոք-
րիկների «հայրիկներն ու քեռիները»: Նրանք մեր
ապագա աշխատանքների մեծ հիմքն են:

Նրանք թափանցում են նմանապես և գյուղը:
Յես գիտեմ, վոր նրանք յերկաթուղով Մոսկվա-
յից գյուղերն են գնում, և յերբ նրանք յերևում
են գյուղում, սկզբում զարմանք են պատճառում,
ասլա հրապուրում են գյուղական պատանիներին
և իրենց այնպես որինակելի յեն պահում, վոր
այստեղ ել կատարում են հեղափոխական, թեև
առաջին հայացքից աննկատելի, աշխատանք:

Ընկերներ, յես այս պատկերը նկարագրեցի
ձեզ, հիմք ունենալով պատկոմական կազմակեր-
պություններից մեկի փորձը: Յես հնարավորու-
թյուն չունեմ խոսելու մի շարք այլ որինակների
մասին, սակայն այս փոքրիկ պատկերից արդեն
դուք տեսնում եք, թե, վորքան կարևոր ե ուշք
դարձնել այս շարժման վրա:

Յեթե դուք չհետևեք այս յերիտասարդ սերըն-
դին, վոր խոստանում ե մի հզոր և հեղափոխական
սերունդ դառնալ, յեթե նա գուրս զա ձեր ձեռ-
քից, ապա մենք կը գրկվենք այնպիսի հնարավո-

րություններից, վորոնց կորուստը հավասարա-
գոր ե կուսակցական հանցագործության:

Յես պետք ե շատ համառոտակի խոսեմ մի
քանի հարցերի մասին, վորոնք դրված են այս-
տեղ՝ պատկոմական կազմակերպության ներկա-
յացուցիչ մեր ընկերների առջև: Առաջին հարցը
— ղեկավարության հարցն ե. նրանք բավարար
թվով ուժեր չունեն, թխ այս, և յերկրորդ՝
նրանք չեն վճռել այն հարցը, թե ով պետք
ե հանձն առնի նրանց ղեկավարությունը:
Կա մի տրամադրություն, ինչպես մենք այդ
տեսնում ենք Ուկրայնայում, յերբ պա-
տկոմական կազմակերպությունը հարում ե
մեր կուսակցական կազմակերպությանը. իսկ մը-
նացած գեպքերում, ճնշող մեծամասնությամբ,
պատկոմներին ղեկավարում ե կոմյերիտական
կազմակերպությունը. պատկոմական ղեկավար
կազմի մոտավորապես 75 տոկոսը կոմյերիտա-
կաններ են, վորոնք շատ լավ են աշխատում:

Սակայն կուսակցությունը, իբրև մի ամբող-
ջություն, իր որենադրական ինստանցիաներում
վոչ մի առնչություն չի ունեցել այս շարժման հետ:

Յերկրորդ հարցը — նյութական միջոցների
հարցն ե: Այս մասին յես շատ համառոտ կը խոսեմ,
քանի վոր ինչ խոսել, յերբ այդ միջոցները չկան:
Պետք ե նկատեմ, վոր շատ հաճախ մեր այս պա-
տանի ապագա ընկերները հնարամտության հը-

րաշքներ են գործում: Նրանք այցելում են մեզ անտեսարարներին (ХОЗЯЙСТВЕННИКИ), ծախում են այն փոքրիկ փողկապները, վոր այնպես շուտ սպառվում են, և այսպիսով գրամ են հավաքում ամենամանրածեղա բաները գնելու համար: Այս հարցը, նույնիսկ մանկավարժական տեսակետից վերցրած, շատ բարդ հարց է: Այստեղ շատերը ժլատում են, սակայն այնպիսի մի հարց, ինչպիսին սեռական հարցն է, նրանց կյանքում բացասիկ դեր է խաղում, ինչպես այդ յերեւում է պատկոմական կազմակերպութիւններում աշխատող բացառապես բոլոր ընկերները պատմածից, այնպես վոր՝ անհրաժեշտ է այս հարցին մոտենալ նուրբ, քաղաքավարի ձևով և վերին ստտիճանի մանկավարժորէն:

Այնուհետև շատ խոշոր կազմակերպչական նշանակութիւն ունի այն հարցը, թե ինչպես այդ պատկոմական կազմակերպութիւնը կապել սոցիալական դաստիարակութիւն կազմակերպութիւնների հետ:

Ինչ վերաբերում է ղեկավարութիւն հարցին, ապա նա լուծվելու յե այն տեսակետի համաձայն, վոր կուսակցութիւնը պետք է ղեկավարի այդ կազմակերպութիւնը կոմյերիտմիութիւն միջոցով: Ինչ վերաբերում է սոցիալական դաստիարակութիւն կազմակերպութիւնների հետ կապելու խնդրին, ապա, ինձ թվում է, վոր այս-

տեղ չպետք է տեղի ունենա մրցութիւն, ինչպէն այդ հաճախ նկատվում է:

Այնուհետև՝ պատկոմական կազմակերպութիւն ղեկավարները մի քանի ընդհանուր գաղափարախոսական փոքրիկ թերումներ ել ունեն: Առաջին թերումը կարելի յե անվանել կազմակերպչական անջատողականութիւն, յերբ այդ ընկերները ձգտում են կազմակերպվել կոմյերիտմիութիւնից բոլորովին անկախ:

Ժիշտ այնպես, ինչպես կոմյերիտմիութիւն հետամնաց խավերի մի վորոշ մասը փոքրիկ արբամադրութիւն ունի կուսակցութիւն կազմակերպութիւնից վորոշ շափով անջատ գործելու: Պայսիսի անջատողական գիծ նկատվում է կովկասում: Այնտեղ կա մի հայանի թերում (ձայներ՝ «ինչպիսի»), ընկերներ, ինչդրում եմ չվախենաք «թերում» բառից. յես հո չեմ ասում, թե այդ թերումը մանր-բուրժուական է. կա աշխատանքի մի այլ տեսակ ընդհանուր թերութիւն, այդ այն է, վոր կամենում են մեքենաբար պատկոմական կազմակերպութիւնների մեջ կիրառել աշխատանքի այնպիսի ձեեր ու յեղանակներ, վորոնք նրպատակահարմար են հասակավորների նկատմամբ: Յես ու գում եմ ասել արձանագրութիւններ կողմելու, պորոֆեսիների ու այլ յերեւոյթների մասին: Առանձին կազմակերպութիւններում արբամադրութիւն կա մի քիչ գերագնահատելու առանձ-

նահատուկ զինվորական մեթոդները, ինչպես նր-
կատվում է որինակ, Լենինգրադի կազմակերպու-
թյան մեջ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ

Յես բուրժուական թուղթիկ կերպով նկարա-
գրեցի աշխատանքի այն կողմը, վոր վերաբերում
է մեր ամենայնքիտասարդ սերնդին: Թույլ
տվեք այժմ անցնելուրիշ բաժնի, Կոմյերիտմիու-
թյան հարցին: Յես այստեղ ել, դժբախտաբար,
բուրժուական հնարավորությունն չունեմ ոգտագոր-
ծելու իմ ունեցած բուրժուականները, այնպես վոր
այստեղ ել յես պետք է համեմատաբար թուղ-
թիկ կերպով կանգ առնեմ ինչպես փաստական
գրության, այնպես ել Կոմյերիտմիության վերա-
բերյալ հարցերի վրա: Յես կարծում եմ, վոր
մասնուումն արձարծված թեզիսները (վորը դուք,
հուսով եմ, թեյկ վոչ ամենայն հավանականու-
թյամբ՝ կարդացած կը լինեք), մասամբ կարող
են փոխարինել այն հարցերը, վոր յես համեմա-
տաբար համառոտ կերպով պետք է շոշափեմ,
խոսելով այս կարևորագույն և խոշորագույն
կազմակերպության մասին:

Վորքան է Կոմյերիտմիության անդամների փաս-
տական թիվը: Կոմյերիտմիության V-րդ համա-
գումարին, 1922 թ. հոկտեմբերին, կար 247

հազար անդամ. 1924 թ. մայիսի 1-ին նրանց
թիվը (վոչ բուրժուական ճիշտ աղեկություններով,
վորովհետև այդ թիվի մեջ են մտնում և լենին-
յան կոչի հետևանքով ընդունվածները) համարում
էր մոտավորապես 595 հազարի:

Լենինյան կոչը ընդհանուր հաշվով (Միության
կենտրոն. Կոմիտեյի հազարգած աղեկություն-
ներով) տվեց մոտավորապես 67 հազար հոգի,
իսկ տոկոսային հաշվով՝ մոտավորապես 11%:

Կոմյերիտմիության սոցիալական կազմը բնու-
րոշվում է մոտավորապես այսպես. բանվորների
տոկոսը շարունակ աճում է. 1922 թ. հոկտեմ-
բերին բանվորների տոկոսն էր 26, XI-րդ համա-
գումարին՝ 34%, 1924 թ. հունվարի 1-ին 40%,
1924 թ. մարտի 1-ին՝ 41%: Կոմյերիտական-
ների հաշվով այժմ նրանց կազմի մոտ 50%
բանվորներ են: Այդ տոկոսն այժմ չի բարձրա-
նում, և նույնիսկ մի քիչ նվազում է և վեր-
ջերս նույն մակերևույթի վրա յես կանգնած:
Ընկերներ, յես պետք է ասեմ, վոր վերջին հան-
գումանքը մեր ստաջ դնում է կոմյերիտական-
ների կազմի հարցը: Կոմյերիտականների մեջ
կար մի փոքրաթիվ հոսանք (յես չեմ խոսում,
իհարկ է, նրանց ղեկավար խավերի մասին), վոր
տատապում էր—նրանց կոմյերիտական լեզվով
արտահայտած—«նեղ գասակարգային տեսա-
կետով»: Մի քանի ընկերներ կարծում էյին, թե

քանի վոր կոմյերիտական կազմակերպությունը համարվում է զեկավար կազմակերպություն, ուստի Կոմյերիտամիության շարքերը համարյա չպետք է ընդունել միջակ գյուղացիներին:

12. Նոր տնտեսական քաղաքականություն, յերկրի արտադրական ուժերի վերելքի, գյուղում (մասամբ և քաղաքում) նկատվող սոցիալական ուժերի վորոշ խմբավորման հետևանքով տեղի յեն ունենում հատուկ պրոցեսներ և աշխատավոր յերիտասարգություն մեջ, վորը պետք է հաշվի առնել և մեր գործելակերպի հիմքը դարձնել:

13. Տնտեսական պրոցեսները և տնտեսական տարբեր ձևերի այն պայքարը, վորի շրջանակներում է ընթանում գլխավորապես կապիտալիզմի ու կոմունիզմի փոխադարձ պայքարը, իրենք հակասական բնույթ ունին. նրանց որյեկտիվ իմաստը հաճախ թագնված է նրանց արտահայտման ձևի տակ (գործադրկություն՝ յերբ աճում է պետարգյունաբերությունը, տրնտեսավարական սխտեմի կապիտալիստական ձևեր, կոոպերացիայի ապրանքային ուղիներ, դրամական սխտեմ, վորպես սոցիալիզացիայի յենթարկված արդյունաբերությունից ամրացման միջոց, և այլն):

Սոցիալիստական եկոնոմիկայի զարգացման այդ հակասական բնույթի հետ միատեղ գոյություն ունի կապիտալիստական ձևերի իրական աճում թե քաղաքում և թե գյուղում: Վոչ միայն այս ամենը դժվարացնում է ընթացիկ

իրականութեան ըմբռնումը, այլև զուգընթացաբար աճում են դեպի մեզ ահաբով թշնամություն տաժող սոցիալական ուժերը:

14. Քաղաքում պետարդյունաբերութեան բարձրացման զուգընթաց, այնուամենայնիվ, զարգանում է գործազրկությունը, վորն առանձնապէս ծանր հարվածում է բանվոր յերիտասարգութեանը. այս հանգամանքը չի կարող հակառակ թերումներ ևս առաջ չբերել այն ժամանակ, յերբ, ընդհանրապէս, աճում և համակրանքը դեպի կոմունիզմ: ՀՍՍՄ ընդհանուր ամբացման և ինտելիգենցիայի փիճակի բարելավման հետ միաժամանակ նկատվում է ինտելիգենտ յերիտասարգութեան՝ հոսանք դեպի ՌԿՅՅՄ շարքերը, սակայն միաժամանակ ուժեղանում են Հոկտեմբերյան հեղափոխութեանը ամենովերտոյան ձևով ընդունող տարրերը: Գյուղում մի կողմից գյուղացիութեան շերտավորումն առաջացնում է թույլ անաստութեան ունեցող գյուղացիների համախմբում և ստեղծում է գյուղական այն ազգաս յերիտասարգութեան մեզնից հեռանալու վտանգը, վորի ահաբովութեանն ընդհանուր առմամբ աճում է, մյուս կողմից՝ բարձրացնում է գյուղացիութեան ավելի ունեւոր խավի ահաբովութեանը և նրանց մղում է գեպի գյուղի կուլտուրական, շապարեմ և քաղաքական գերիշխանութեան:

15. Հաշվի առնելով այդ պրոցեսները, ՌԿՅՅՄ պետք է կազմակերպութեան հիմնական կորիզի — պրոլետարական յերիտասարգութեան շրջանում ուժեղացնի իր աշխատանքը յերեք ուղղութեամբ. անստեղծական-իրաւական (պատանի բանվորների արտադրական շահերի պաշտպանութեան), յերիտասարգութեան ընդհանուր կրթական և տեխնիքական մակարդակի բարձրացման և քաղկրթական՝ ամենից առաջ աշտեղ անկյունաքար դարձնելով սոցիալ-անասական և քաղաքական պայմանների առանձնահատկութեանների լուսաբանումը: Յեռանգով իր շարքերն առնելով բանվոր յերիտասարգութեանը, ՌԿՅՅՄ պետք է խիստ զաման յենթարկի ինտելիգենտական տարրերին, վորանց ընդունելութեանը պետք է պայմանավորել ավելի խիստ ձևական պահանջներով (ավելի թվով հանձնարարականներ, թեկնածուական ստաժի յերկարում, ավելի խիստ քաղստուգումներ):

16. Կամ յերիամիլութեան գյուղական աշխատանքները աշխատանքի պայմաններում խիստ կարևոր քաղաքական նշանակութեան են ստանում: Գյուղացիական, յերիտասարգութեանը քաղաքականապէս պետք է միախորվի միայն Յերիտասարգական Միութեան ձեւքով, վորի բջիջներն արգեն հիմա իսկ գյուղում ավելի մեծ գեր են խաղում, քան կուսակցութեան բջիջները:

ՌԿՅՅՄ գյուղական բլիժներում պետք է ամեն կերպ աշխատել ապահովել պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի ղեկավարութունը, կազմակերպության շարքերը գրավելով անտեսապես միջակ յերիտասարգության լավագույն, ամենտակտիվ և ամենից ավելի խորհրդային տարրերին:

Այս տեսակետից յեխելով, պետք է մճուհական պայքար մղել միության դոները գյուղացիական միջակ յերիտասարգության առջև փակելու դեմ: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է գյուղական բլիժների կազմն ու նրանց թիվը ավելացնել միայն այն շափով, վորչափ հնարավոր է լինի գործնականապես հոգալ նրանց բոլոր կարիքները, այսինքն՝ ապահովել պրոլետարական ելեմենտների ղեկավարութունը: Կոմյերիտմիության գյուղական աշխատանքները հետևյալ հիմնական տարրերը պետք է ունենան. հասարակական-քաղաքական՝ կառված անտեսության հետ (գյուղխորհուրդ, փոխովկոմ, կոոպերացիա, տերիտորյալ գորամասեր), բանավոր և գործնական անտեսական պրոպագանդա, գյուղասնտեսական կոլեկտիվներ, դպրոց, լսատրակների ու կիսապրոլետարական տարրերի շահերի պաշտպանութուն:

17. ՌԿՅՅՄ շարքերը, գործարանային աշակերտության դպրոցները, պրոֆ.տեխնիքական

գասարնթացքները, բանֆակները և մյուս համապատասխան հիմնարկությունները մտնող ազջիկների աննշան թիվը կուսակցության համար ստեղծում է այն վաանդը, վոր աշխատավոր յերիտասարգության մի մասը կազմող կանացի մասող սերունդը կարող է կոմունիստական դատարակության ազգեցության շրջանից դուրս մնալ:

ՌԿՅՅՄ պետք է իր աշխատանքների յեղանակը, բոս հնարավորության, այնպես փոփոխի ու հարմարեցնի, վոր կարողանա ավելի մեծ թվով ազջիկների գրավել դեպի միության շարքերը և դեպի միութենական ակտիվ աշխատանք: Կուսակցությունն ամբողջովին, արհմիություններն ու խորհրդային մարմինները պետք է ոգնության գան կոմյերիտմիության՝ ազջիկներին դեպի միության շարքերը, բանֆակները գործարանային աշակերտության դպրոցները, արհևստակց. ու հանրակրթական գասարնթացքները գրավելու համար: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել Արևելքի աշխատավոր ժողովուրդների գեղջկուհիների ու ազջիկների մեջ կատարվելիք աշխատանքների վրա:

3. ԿՈՒՍԵ.ԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԿՅՄ

18. Պրոլետարական և գյուղացիական յերիտասարգության կազմակերպությունը

ՌԿՅԵՄ առաջնակարգ հասարակական-քաղաքական նշանակութիւն ունի: Կոչված լինելով կատարելու այն պահեստի գերը, փորագրից կուսակցութիւնն անուամբ և լավագույն տարրեր՝ նոր և ավելի յերիտասարգ ուժերի մշտական հասանքն ապահովելու համար, Կոմյերիտամութիւնը միաժամանակ հանդիսանում և լավագույն հաղորդիչը՝ կուսակցութեան ազգեցութիւնն ավելի լայն բանփոխական ու գյուղացիական խավերի վրա տարածելու գործում:

19. Կազմակերպելով աշխատավոր յերիտասարդութեանը, փորպես այգպիսին, սեննալով հատուկ, ընդհանուր կուսակցականից տարրեր նպատակներ, ծառայելով փորպես կուսակցութեան ազգեցութեան հաղորդիչ և ընդգրկելով իր շարքերում աշխատավորութեան լայն խավերը, հանդիսանալով այգպիսով մասսայական յերիտասարդական կազմակերպութիւն, ՌԿՅԵՄ պետք և լինի ինքնավոր կազմակերպութիւն:

20. Մյուս կողմից՝ նա չի կարող կատարել իր հսկայական գերը, յեթե լիովին չապահովի կուսակցութեան ազգեցութիւնն ու զեկաւարութիւնը, փորք կարող և ամբանալ ու բարելավել կուսակցական ներկայացուցիչների խիտ ընտրութեամբ, մշտական փոխադարձ ինֆորմացիայի և միութեան մեջ աշխատելու ուղարկվող լավագույն կուսակցական ընկերների ընտրութեան միջոցով:

21. Ուստի, թեև ընդհանուր առմամբ յերիտասարդութեան մեջ աճում և ձգտումը զեպի կուսակցութիւնը, այնուամենայնիվ պետք և կովել առանձնանալու, կուսակցութիւնից անջատվելու այն բոլոր տրամադրութիւնների գեմ, («իրավահավասարութեան» սեսութիւն, և այլն), փորմնք նկատվում են միութեան անդամների մի փորոշ մասի մեջ:

22. Մեր հերթական հիմնական անելիքը պետք և լինի—միութեան կուսակցական կորիզն ուժեղացնել և նրա ակտիվ աշխատողների կազմին կուսակցական կյանքին մասնակից դարձնել: Անհրաժեշտ և ուժեղ թափով կուսակցութեան շարքերը հրապուրել գաղպյաճի յերիտասարգ բանփորներին, յերկարացնելով նրանց նկատմամբ լենինյան կոչի ժամկետը:

23. Կուսակցութեան զեկաւարութեամբ իր ամբողջ հասարակական աշխատանքը կատարելով ՌԿՅԵՄ պետք և սիտեւմասիկ կերպով իր անդամներին մասնակից դարձնի ՍԽՂՄ ու ՌԿԿ կյանքի բոլոր հիմնական հարցերի քննութեանը, շարունակ, կուսակցութեան հետ համերաշխ քննութեան անելով այդ հարցերը և մասնակցելով կուսակցութեան ընդունած փորոշումները իրագործմանը:

24. Անհրաժեշտ և կանոնավորել կուսակցութեան պատմութեան, նրա ծրագրի ու գոր-

ծելանկերպի, նրա կազմակերպչական սկզբունք-
ների և ընկ. Լենինի թողած ամբողջ գտողափա-
րական ժառանգութեան սիստեմատիկ ուսում-
նասիրութեան գործը:

Հատկապես պետք է լուսաբանել կուսակցու-
թեան՝ ոպորայունիզմի դեմ մղած այն պայքարը,
վորի բովում աճել ու կոփվել է մեր կուսակ-
ցութեանը: Այսպիսով անհեթեթ պետք է հա-
մարվի ՌԿԿ (բ.) ներքին թեքումների դեմ մղ-
վող պայքարի հանդեպ «չեզոքութեան» պահ-
պանելու տեսակետը:

25. Կուսակցութեան անդամները պետք է
յուրացնեն այն տեսակետը, վոր միութեան աշ-
խատանքը հակայական նշանակութեան ունի:
Կուսակցութեան անդամների կողմից վորևէ
արհամարհական վերաբերմունք դեպի այդ աշ-
խատանքը բոլորովին անթույլատրելի չէ և
պրոլետարիական շարժման համար՝ չափազանց
վտանգավոր:

26. Կուսակցութեանը պետք է կյանքում
կիրառի բազմիցս հանված վորոշումներն այն
մասին, թե միութեան կարիքների համար պետք
է մեծ թվով և ավելի վորակյալ կուսակցական
աշխատավորներ սրամաղրել: Անհրաժեշտ է
հիշել, վոր ներկայումս միութեան առաջ գրված
նարքերի աճուսն ու բարգաւաճումը պահանջում են
մասնագիտական պատրաստութեան, ընդունա-
կութեան և փորձ:

Ռւշադրութեան հասունացող յերիտասար-
գութեանը, ուշադրութեան ՌԿՅՅՄ, — այս պետք
է լինի մեր կուսակցութեան կարևորագույն լու-
րուսագնորից մեկը:

1. ՌԿՅՅՄ աշխատանքները

26. ՌԿՅՅՄ հիմնական նպատակն է բար-
րացնել ամբողջ միութեան և նրա յուրաքան-
չյուր առանձին անդամի հասարակական քաղա-
քական ախաբութեանը: Կոմյերիտականները,
ինչպես քաղաքում, այնպես և գյուղում, պետք
է հանդիսանան կուսակցութեան առաջին ոգնա-
կանները քաղաքական վարչական-խորհրդային
անտեսական և կրթական առարեղմեբում: Միու-
թեան աշխատանքը պետք է հեռու լինի ինչ-
պես քաղաքականութեան նկատմամբ չեզոք՝
«գուտ կույտուրականութեանից», այնպես և
կույտուրական, անտեսական ու վարչական-գործ-
նական աշխատանքի հետ չկապված «գուտ քա-
ղաքականութեանից»: Կույտուրական ու քաղա-
քական աշխատանքների զուգորդումը պետք է
ՌԿՅՅՄ ամբողջ գործունեութեան հիմքը կազմի:

27. Ճիշտ նույն ձևով ել անհրաժեշտ է
տեսական ուսուցման ու գործնական աշխա-
տանքների զուգորդումը: Միայն շինարարական
գործնական աշխատանքներին կենդանի մաս-

նակցութիւնն ցույց տալով ՌԿՅԵՄ կարող կը լինի դաստիարակել—պատրաստել կոմունիզմի համար պայքարող իսկական մարտիկներ: Կուսակցութիւնը հատուկ ուշադրութիւն պետք է դարձնի կոմյերիտական ակտիվին: Պետք է հաստատ վորոշմամբ ստորին բանվոր ակտիվիստին առաջ մղել դեպի միութեան ներքին ակտիվարդ, ղեկավար աշխատանքների, ինչպես և նրա սակցական, արհեստակցական ու խորհրդային աշխատանքների ասպարեզը: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է մարքսիստական ինքնակրթութեան սիստեմատիկ աշխատանքը ակտիվիստի՝ միութեան հանդեպ ունեցած պարտականութիւնները մի մասը համարել, չձանրաբեռնելով նրան կազմակերպչական-ղեկավար աշխատանքներով:

28. Այսպիսով ՌԿՅԵՄ անդամները պետք է կուսակցութեան ղեկավարութեամբ մասնակցեն արհմիութեաններին, մասնավորապես գործարկումներին և կոոպերատիվներին աշխատանքներին, նոր կենցաղի (կոմունայի տներ և այլն), անզրադիսութեան վերացման, անսպաստանների վիճակի բարելոքման, արտադրութեան բարձրացման (արտադրական կոնֆերանսներ, աշխատ. գիտակ. կազմակերպում, և այլն) աշխատանքներին, բանակի և նավատորմի, դպրոցական, քաղկրթական, գյուղատնտես. պրոպագանդայի և խորհրդայն-

յին գյուղական ապարատի շինարարութեան աշխատանքներին, և այլն, և այլն:

29. Քաղաքի պրոլետարական յերիտասարգութեան մեջ կատարվելիք աշխատանքների լիարժեք անհրաժեշտ է ամենից առաջ միութեան գործունեութեանն ուժեղացնել անտեսական իրավական ուղղութեամբ: Այստեղ, ի նկատի ունենալով գործադրութեան աճումն ու աշխատանքների աշխատավարձի համեմատական նվազումը, պետք է պայքարել, վորպեսզի պահպանվի բանվոր յերիտասարգութեանը, վորպես սպազա լիարժեք վորակյալ աշխատավորների կադր, կիրառվի յերիտասարգութեան աշխատանքի պաշտպանութեան որենսդրութեանը, պահպանվի պատանիները՝ հասակավոր բանվորների նկատմամբ սահմանված տոկոսը, պատանիների աշխատանքի վարձատրութեան և նրանց սոցիալական ապահովութեան սիստեմը, և այլն. անհրաժեշտ է հետեւել աշխատանքի պաշտպանութեան, և տարիֆային աշխատանք կատարել: Առանձնապես անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել վորպեսզի արդյունաբերութեան զարգացման համեմատ համապատասխան վորակման բանվորական ուժեր պատրաստվեն: ՌԿՅԵՄ պետք է նմանապես սիստեմատիկ աշխատանք կատարի պաշտպանելու մասնավոր, վարձակալական և կոնցեսսիոն ձեռնարկութեաններում աշխատող

պատանիների շահերը, ուշագիւր հեռակելով, վորպեսզի գործադրվեն խորհրդային սրենքները, և վերջինների խախտման դեպքում արհմիությունների ու կուսակցութեան հետ միասեղ համապատասխան դիմադրութեան կազմակերպի:

30. Բանալոր պատանիների և բանվոր յերրտասարդութեան տեխնիքական-կուլտուրական մակարդակի բարձրացման ստպարիզում առանձին կարևոր գեր են խաղում գործարանային աշակերտութեան դպրոցներն ու տեխնիքական դասընթացքները: Գործարանային աշակերտութեան դպրոցների ընդլայնումը, դասավանդման բարելավումը, ինչպես և նրանց նյութական ապահովութեան հարցը, հանդիսանում են կուսակցութեան, պրոֆմիությունների ու խորհրդային իշխանութեան հերթական անելիքը, վորի ընթացքում անհրաժեշտ է ամենից առաջ հենվել ՌԿՅՆՄ վրա:

31. Իպրոցական աշխատանքների ստպարիզում անհրաժեշտ է թե քաղաքում և թե գյուղում, վորքան հնարավոր է, մեծ չափով դպրոցը հարմարեցնել բանվոր դասակարգի ու գյուղացիութեան պահանջներին, յելակետ ունենալով սոցիալիստական շինարարութեան նպատակները: Այս աշխատանքը պետք է կատարել Լուսժողկոմատը ՌԿՅՆՄ հետ լիակատար համերաշխութեամբ: Սրա հետ կապված բոլոր հարցերի մը-

շակման և լուծման համար անհրաժեշտ է հրավիրել հատուկ խորհրդակցութեան Կ. Կ. առնթեր: Իպրոցական աշխատանքների ընթացքում անպայման պետք է, վորքան հնարավոր է մեծ չափով զարկ տալ աշակերտութեան ինքնագործունեութեան և զարգացնել նրանց մեջ լայն հասարակականութեան:

32. Բարկրթութեան չափազանց կարևոր ստպարիզում մեր կենտրոնական նպատակը պետք է լինի պարզել սոցիալիստական զարգացման հեռանկարները՝ նոր անտեսական քաղաքականութեան, կապիտալիստական ողակման և միջազգային հեղափոխութեան աճող ուժերի որեկտիվորեն անհրաժեշտ պայմաններում: Համաշխարհային հեռանկարների սկզբունքային բարձրութեան համոզող քաղկրթութեանը վոչ մի գեպքում չպետք է գատարկ ու բարձր ճոտումարանութեան բնույթ կրի: Լայն ազխտացիայի հետ միատեղ առանձնապես անհրաժեշտ է կատարել խորացած պրոպագանդիստական աշխատանք, վորը ներկա մոմենտում ամենից հարմար է կապել լենինիզմի ուսումնասիրութեան հետ, նկատելով այդ վորպես Մարքսի ուսմունքի ամենից ավելի կատարյալ զարգացում ստացած ձև: Այդ ուսումնասիրութեանը պետք է հենվի հասարակական կյանքի բոլոր գործնականապես կարևոր ստպարեզներից կոնկրետ գիտելիքներ հազորգելու վրա:

33. Շատ ավելի մեծ ուշադրութիւն պետք է դարձնել մամուլի վրա, կազմակերպելով ամսագրեր, լրագրեր, հասուկ բրոշյուրներ և արհեստագիտն թերթեր հրատարակելու գործը, մասնավորապես գյուղի համար. անհրաժեշտ է հասուկ ամսագիր հրատարակել գյուղական յերիտասարդութեան կարիքներին ծառայելու համար: Հավասարապես ուշադրութիւն պետք է դարձնել նաև ազգային փոքրամասնութիւններին, ազգային հանրապետութիւններին ու շրջաններին մամուլի ու ժեղագրման և բարելավման վրա:

„Молодая гвардия“-ն պետք է ամենամեծ շահերով հարմարեցվի յերիտասարդութեան առաջավոր խավերի առանձնահատուկ կարիքները բավարարելուն: Լրագրերը պետք է մի կողմից գետեզեն ընդհանրացման բնույթի, բայց միևնույն ժամանակ՝ մատչելի ու գործնական պրոպագանդիստական բովանդակութեան հոգիածներ, իսկ մյուս կողմից ել ավելի սերտ կապին գաժառի հետ, ամրացնելով ու ընդարձակելով պատանի թղթակիցների ինտիտուտը, վոչ մի կերպ հրնարավորութիւն չտալով նրան մի նոր «ապարատ» դառնալու: Անհրաժեշտ է, ինչ կերպ ել լինի, կանոնավոր կերպով տարածել յերիտասարդական մամուլը և գործնական միջոցներով նպաստել, վորպեսզի նա թափանցի գյուղ:

34. Բարձրագույն և II աստիճանի դպրոց-

ներում ՌԿՅՅՄ պետք է համախմբի ու միավորի խորհրդային տարրերին, նրանց իր ղեկավարութեան տակ առնի, նպաստի դպրոցները կուսակցութեան ընդհանուր ուղղութեան վորու համեմատ վերակազմութեան յենթարկելուն, ամեն կերպ աջակցելով դպրոցների եյական նվաճմանը:

35. Գյուղում, ինչպէս արդեն ասվեց վերևում, ՌԿՅՅՄ դերը չափազանց մեծ է և պատասխանատու: Գյուղակ. փոխօգկոմներին, հողանտառմիութեան, կոոպերացիայի, խրճիթ-ընթերցարանների ու այլ մարմինների աշխատանքների ընթացքում ՌԿՅՅՄ, հենվելով գլխավորապես գյուղական չքավոր տարրի վրա, պետք է կարևոր գործոն հանդիսանա, շահմանափակվելով կուլտուրական բնույթի ձեռնարկութիւններով: Գյուղական բջիջի աշխատանքները պետք է ընթանան ամբողջ գյուղական յերիտասարդութեան աչքի առջև. բջիջը պետք է աշխատի ամեն տեղ, վորտեղ ժողովվում է գյուղական յերիտասարդութիւնը (որին. տերրիտորյալ գործամասերում):

36. Միութիւնը պետք է ոգնի գյուղացիական առաջավոր յերիտասարդութեանը — ապրել ու աշխատել նոր ձևով: Նա պետք է խորհրդային իշխանութեան բոլոր հասարակական-քաղաքական և կուլտուրական ձեռնարկութիւններին, այսինքն՝ հողոգտադործման նոր ձևերին,

ընդհանուր գրագիտութեան և տեխնիքական բարելավումները համար մղվող պայքարը գործոն հաղորդիչը հանդիսանայ: Միությունը պետք է աջակցի գյուղական յերիտասարդութեանը՝ համախմբելով ու կազմել գյուղատնտեսական կոլլեկտիվներ, հիմնել կոոպերատիվներ և ամեն կերպ պետք է նպաստի ցուցաբաշտեր հիմնելուն:

37. Գյուղական բլիժի աշխատանքների մեջ առանձնապես կարևոր տեղ պետք է բռնի գյուղական յերիտասարդութեան դպրոցը: Գյուղական կոմյերիտականների կոնկրետ ու հիմնական նպատակը պետք է հանդիսանա՝ հիմնել ու կանոնավորել գյուղական յերիտասարդութեան դպրոցները, վորոնք պետք է պատրաստեն կոոպերացման ու հողի կոլլեկտիվ մշակման ձգտող հեղափոխական ու կուլյտուրական յերկրագործի նոր սիւլը: այս նպատակն իրագործելի յե խորհրդային ու կուսակցական տեղական մարմինների յուրջ ոժանդակութեամբ: Կոմյերիտութեան քաղաքային կազմակերպութեանները պետք է այնպես ոգնեն գյուղական կազմակերպութեաններին, վոր գյուղի կուլյտուրական կարիքները հոգալու գործին լծվեն Կոմյերիտութեան բոլոր գործարանային ու քաղաքային բլիժները և առաջին հերթին՝ գյուղի հետ կապված յերիտասարդութեանը: Միաժամանակ անհրաժեշտ է

ձգտել, վորպեսզի այստեղ ևս կուլյտուրական աշխատանքը միանա քաղաքականին և ամբողջապես տողորված լինի այն քաղաքական աշխատանքի վորով, վոր ուղղված է գյուղացիութեան յավագույն յտավերի վերամշակմանը: Այստեղ հիմնական նպատակը պետք է լինի—հմտորեն քարոզել այն գաղափարը, թե անհրաժեշտ է բանվորների ու գյուղացիների միութեանը՝ առաջինների դեկավարութեան տակ:

38. Անհրաժեշտ է յուրջ ուշադրութեան դարձնել, վորպեսզի հատկապես գյուղում, ՌԿՅԵՄ աշխատանքներին մասնակից լինին ինտելիգենցիայի յավագույն ուժերը—ուսուցիչն ու գյուղատնտեսը: Գյուղական ուսուցիչն ու գյուղատնտեսը յոռոր պրական դեր կը խաղան, յեթե նրանց նյութական վիճակի անհրաժեշտ բարելավման և նրանց կողմից դեպի յտրհրդային իշխանութեանը նկատված դարձի հեռանալով հաջողվի նրանց և կոմյերիտական բլիժների միջև համերաշխութեան ստեղծել:

39. Հսկայական նշանակութեան ունի ՌԿՅԵՄ աշխատանքը բանակում և նավատորմում, վորը պետք է տողորված լինի միջազգային մարտական կրթութեան վորով: Այդ աշխատանքներին պետք է մասնակցի ամբողջ միութեանը: ՌԿՅԵՄ հիմնական նպատակը պետք է լինի այս ստպարեղում.—ազգական պրոպագան-

դան ուժեղացնել, զինակոչի յենթակա յերիտա-
սարդության մեջ բաղաբաղան-կրթական աշխա-
տանք կատարել, հոգալ կարմիր զինվորի ու
Նավաստու կենցաղի մնասին, պրոպագանդա մղել
ողանավատորմի գաղափարի տարածման ոգտին,
աշակցել ՍՍՀՄ ռազմական կարողության բարձ-
րացմանը, տարածել ընդհանրապես ռազմական
գիտելիքներ և մասնավորապես քիմիական պաշտ-
պանության միջոցների վերաբերյալ տեղեկու-
թյուններ:

40. Իր ամբողջ գաստիարակչական աշխա-
տանքը վարելով ինտերնացիոնալիզմի նշա-
նաբանի տակ, պայքարելով ինչպես վեփ-
կոռուսների շովինիզմի, այնպես և մյուս
ազգությունների ազգայնական նախապայման-
ների դեմ, ՌԿՅՅՄ պետք է առավելագույն ջանք
դործ զնի ուժեղացնելու աշխատանքը Միության
ինքնավար և անկախ հանրապետություններում,
և հատկապես նախկին ցարական գաղութներում,
վորտեղ ամենից ավելի սուր կերպով է զգաց-
վում տեղական կուլտուրական կադրերի պա-
կասությունը, և վորտեղ այդ կադրերը կարելի
է պատրաստել բացառապես տեղական յերի-
դասարդության խավերից: Այդ աշխատանքը
չափազանց կարևոր նշանակություն ունի իմպե-
րիալիզմի լծի տակ առապող՝ Արևելքի ժողո-

վուրդների հետ մերձեցում ստեղծելու տեսա-
կետից:

41. Մի շարք, հատկապես՝ կենցաղական
հարցեր լուծելու համար պետք է աշխատել կազ-
մակերպել գանազան ձևի կամավոր միավորում-
ներ (об.единение), վորոնց անդամակցեն կոմ-
յերիտական միջուկի հետ միասին նաև անկու-
սակցական ընկերներ (այս կարգին են պատ-
կանում՝ գյուղատնտեսական խմբակները գյու-
ղում, արվեստի ու ծխելու դեմ պայքարող լի-
զաները, բնագիտական ընկերությունները, և
այլն): ՌԿՅՅՄ արհմիությունների հետ միասին
ի նկատի ունենալով յերիտասարդության, հատ-
կապես ուսանողության մեջ նկատվող տրամա-
բությունները ու Ֆիզիքական անկումը, պետք
է ուժեղացնի իր աշխատանքները ֆիզիքական
կուլտուրայի ասպարիզում, այս բառի ամենա-
լայն իմաստով (ֆիզիքականներ, եքսկուրսիաներ,
մարզախաղեր, առողջապահական պրոպագան-
դա, և այլն):

Այդ աշխատանքների մեթոդն ու կազմա-
կերպչական ձևերը ՌԿՅՅՄ պետք է մեծ
ուշադրությամբ հաշվի առնի, վորովհետև այդ
կազմակերպությունների միջոցով նա կարող է
իր ազդեցության տակ առնել աշխատավոր յե-
րիտասարդության ել ավելի լայն խավեր:

5. Բարձրագույն զպրօքը յե՛վ յեթիսասարգուրքուներ.

42. ՌԿՅԵՄ, կոմունիզմի այդ մաստայական զպրօքն ամբապնդելու և նրա աշխատանքներն աշխուժացնելու համար բոլոր միջոցները ձեռք առնելով, կուսակցությունը պետք է իր առաջնակարգ նպատակը դարձնի կոմունիստական բնականոն դաստիարակություն տալ յերկուսասարգությանը բարձրագույն զպրօքներում:

43. Բարձրագույն զպրօքի նվաճման գործում, ինչպես առաջ, շափազանց խոշոր դեր է կատարում նրա նախագուներին (ստորին և միջնակարգ զպրօք, խորհուրդապրօք, բանֆակ) տիրելը:

44. Անհրաժեշտ և առանձին ուշադրություն դարձնել այդ մաստայական զպրօքներին: Նախ, այն պատճառով, վոր այդտեղ պետք է պատրաստվեն համեմատաբար կրթական ցած մակարդակի տեր բանվորներ՝ այգտեղից բարձրագ. զպրօքներն անցնելու համար, և յերկրորդ, վորովհետև այդ զպրօքների համար կան անհրաժեշտ թվով դասատուներ: Պետք է ամեն կերպ աջակցել, վորպեսզի վոչ միայն պահպանվի, այլև բնդարձակվի ստորին ու միջնակարգ արհ. զպրօքների ցանցը, վորի նյութական ու կուլտուրական կարիքները հոգալու գործում մասնակցություն պետք է ունենան վոչ միայն ՍԽՀՄ կենտրոնական հիմնարկութուները, այլև

տեղական խորհրդային ու հասարակական կազմակերպությունները:

45. Հաշվի առնելով անտեսական պայմանները, համակերպվելով անտեսական զարգացման պահանջներին ու առձեռն միջոցներին, պետք է համաձայնվել, վոր կրճատվի բարձրագ. զպրօքների և ուսանողների թիվը, և միաժամանակ բարելավվի գործի նյութական և ուսումնական կողմը: Միայն այս ճանապարհով կարելի յե բարելավել և ուսանողների նյութական ծանր վիճակը:

46. Չգտելով բնյհանրապես բարելավել կրթական գործը բարձրագույն զպրօքներում, կուսակցությունը պետք է առանձին ուշադրությամբ հետևի, վորպեսզի բարելավվեն դյուրատնտեսական ու մանկավարժական բարձրագ. զպրօքները: Բարձրագ. զպրօքները կրճատելու գեպքում անհրաժեշտ է հետևել, վորպեսզի անպայման ի նկատի առնվի տարբեր մասնագիտության զպրօքների վոչ միատեսակ նշանակությունը:

47. Առաջվա պես շափազանց սուր բնույթ ունի բարձրագ. զպրօքներն անհրաժեշտ թվով գիտական-մարքսիստական դասատուներով ապահովելու հարցը: Մասնագիտական բարձրագ. զպրօքների մեծ մասում նույնիսկ հասարակատական աճբիսները բռնել են վաղեմի բուր-

ժուական պրոֆեսորները: Անհրաժեշտ է ամեն ջանք գործ դնել շուտափույթ կերպով կոմունիստ պրոֆեսորների կազմը ստեղծելու համար, առավելագույն չափերով ծավալելով այդ նպատակով կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի աշխատանքները, և միաժամանակ միջոցներ ձեռք առնելով բանվորականացնելու նրա կազմը, նրան առնթեր՝ բանֆակի ու այլ դպրոցների շրջանավարտների նախապատրաստական դասընթացքներ բանալով: Անհրաժեշտ է, նմանապես, ուշադրութուն դարձնել մեր բարձրագ. դպրոցների աշխատակիցների կազմը բարելավելու և նրանց նյութապես սպահովելու վրա:

48. Կուսակցութունը պետք է հոգ տանի պատրաստելու փորակյալ կուսակցականներ ընդհանրապես ակտիվ հեղափոխական աշխատանքի և խորհրդային շինարարութեան քաղաքական գեկավարութեան համար: Այս նպատակին և ծառայելու կոմունիստական բարձրագույն դպրոցը, փորի կառուցումը պետք է ընթանա բազմակողմանի զարգացմամբ քաղաքական աշխատակիցներ, և վոչ նեղ մասնագիտութեամբ գործիչներ պատրաստելու ուղղութեամբ:

49. Վերջին նպատակը մեզ պարտավորեցնում է մարտել մեր բարձրագույն դպրոցներում գոյութուն ունեցող սքոլաստիկայի դեմ: Կոմունիստական բարձրագ. դպրոցի ծրագիրը

պետք է լրացնել այնպիսի գիտելիքներով, վորոնք մերձավոր առնչութուն ունեն գործնական կյանքի հետ. հասարակական գիտութունների գասավանդումը պետք է թարմացնել, յեխնելով ժամանակակից գործնական կարիքներից. մյուս կողմից՝ անհրաժեշտ է պայքարել ծայրահեղ գոեհկացման տենդենցի և թեորիայի վրա կատարվող հարձակումների դեմ: Թարմացնելով ու բարեփոխելով դասավանդման յեղանակները, տեսական մեծ ուշադրութուն դարձնելով այժմեյական հարցերի վրա, մենք, սակայն, վոչ մի կերպ չպետք է հրաժարվենք մարքսիստների նոր սերունդը հիմնական տեսական պաշարով զինելուց, փորի վրա հենվելով, պայքարել ու պայքարում է մեր կուսակցութունը:

50. Անհրաժեշտ է բոլոր ակտիվ բարձրագ. դպրոցների նկատմամբ հանձնարարել ամենակենդանի կապ ստեղծել դպրոցի ու արտադրութեան միջև: Մասնագիտական բարձրագ. դպրոցներում այդ կապն իրականանում է համապատասխան ձեռնարկութուններում գործնական աշխատանքներ կատարելով, բոս փորում թե կուսակցութունը և թե կոմյերիամիութունը պետք է հեռեն, փորպեսզի այդ գործնական աշխատանքը նեղ տեխնիքական բնույթ չկրի. այլ հնարավորութուն տա գործնական աշխատանքների ուղարկվածին մտաբերից ծանոթա-

նալու ձեռնարկության ամբողջ կյանքին: Կոմունիստական բարձրագույն դպրոցի ուսանողներն այս պահանջը պետք է բավարարեն արտադրական բջիջներում ու արհմիություններում ախտեմատիկ կուսակցական բնույթի աշխատանք կատարելով, վորը պետք է անպայման հաշվի առնվի ու բովանդակութուն ստանա բարձրագույն դպրոցում:

51. Բարձրագույն դպրոցների, կուսակցության ու Կոմյերիտմիության բջիջները, հանդիսանալով ուսանողության ներքին կյանքի գործոն ու ղեկավար ուժ, պետք է լավացնեն իրենց աշխատանքի բովանդակութունն ու յեղանակները. նրանց ղեկավար չենք յերբեք նրանց իրավունք չպետք է տա ավելի պակաս չափերով կատարելու իրենց դպրոցական և հասարակական պարտականությունները. պետք է առանձնապես խիստ մաքառել կոմմեծամտության ղեմ: Անհրաժեշտ է կոմունիստների ու կոմյերիտականների աշխատանքն այնպես կանոնավորել, վոր հասարակական ու ակադեմիական աշխատանքները փոխադարձաբար միմյանց չխանգարեն: Այս նպատակով անհրաժեշտ է կովել կազմակերպչական խառնափնիթորության, աշխատանքի զուգահեռականության և ավելորդ, իզուր անզն աշխատող կազմակերպությունների ղեմ: Մյուս կողմից՝ բարելավելով ուսանողներ-

րի նյութական զրուծյունը, անհրաժեշտ է կրավել նրանց՝ դպրոցական աշխատանքներով շափից դուրս ծանրաբեռներու ղեմ, վորն արդեն մեղանում կենցաղական, ուստի և վտանգավոր յերևույթ է դարձել:

52. Կուսակցությունը պետք է հասկանա, վոր յերիտասարդության մեջ գոյություն ունեցող բացասական յերևույթները (ղիլետանտություն, կասկածամոլություն, գաղափարախոսական թեքումներ ղեպի իղեալիցս կամ գոեհկացում) անխուսափելիորեն բղխում են մի կողմից՝ ուսանող յերիտասարդության չափազանց ծանր նյութական վիճակից, իսկ մյուս կողմից՝ գաղափարախոսական հրամանատարական զիրքերում աշխատող կոմունիստական վորակյալ ուժերի կատաստրոֆային պակասությունից: Յերիտասարդության գաղափարական պահանջներն այդպիսով աճում-զերգանցում են յեղանակ ղեկավար ուժերի քանակից, բարդացող, հատուկ մշակում պահանջող հարցերը հաճախ մնում են անպատասխան, և յերիտասարդությունը հեղտությամբ կարող է շեղվել ու բռնել ոխալ ճանապարհ: Ուստի յերիտասարդության գաղափարական դաստիարակության բարելավման համար բացարձակապես անհրաժեշտ պայման է վորակյալ ուժեր արամադրել բացառապես այդ աշխատանքի համար:

ՊԱՏԿՈՄՆԵՐԻ՝ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՍՏՈՒՆԻՍՏԱ-
ՎԱՆ ՊԱՏԱԿԵԿԱՎԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ ՎԵՐԱՆՎԱՆՎԵԼԸ.

ԹԿԿ (Բ.) XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե
ՊԱՏԿՈՄՆԵՐԻ ՇԱՐԱՀԱՆԴԵՍԸ (ՍԱՐԱԴ).

Վասյուտին. Ընկեր պատկոմներ, Կոմունիստական Յերիտասարգական Միության ԿԿ անունից հայտարարում եմ այն մասին, վոր պատանի կոմունիստներն այսորվանից վերանվանվում են «Վ. Ի. Լենինի անվան կոմունիստական պատանեկական խմբակներ»: Վոչ միայն դուք հպարտությամբ պետք է կրեք այդ անունը, այլև նա ձեր վրա պարտականություն է դնում դաստիարակվելու և գառնալու բանվորական զործի համար նույնպիսի մարտնչողներ, ինչպիսին Վլադիմիր Իլյին էր:

Ընկեր պատանի լենինականներ, Կոմյերիտ միությունը կոչ է անում ձեզ, մեր կրտսեր յեղբայրներին, — յեղեք պատրաստ:

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ: Վասյուտին. Խոսքը արվում է ընկ. Կամենսկին: Կամենսկվ. (ծափեր) Ընկեր պատանի լենինականներ, Կոմունիստական Կուսակցության

XIII-րդ համագումարի անունից վողջունում եմ ձեզ. ձեր ավագ յեղբայրներից, կոմյերիտականներից դուք ստացաք «լենինականներ» կոչումը. հպարտությամբ կրեցեք այդ կոչումը. այդ կոչումը ձեռք են բերել իրենց արյունով ձեր այն բանվոր յեղբայրները, վորոնք կռվել են, վորպեսզի աշխատավորների սերունդը ապրի վոչ թե կապիտալիստական դժոխքում այլ՝ ազատ մարդկանց ազատ կյանքով:

Լենինականների դրոշը այժմ ծածանվում է ձեր գլխին, բայց նա դեռ կարող է հարձակման յենթարկվել, այնպես վոր՝ յեղեք պատրաստ:

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ: Կամենսկվ. Հռոճ, պատանի ընկերներ, վորպեսզի յես մղեք այդ դրոշակի վրա գործվող ամեն մի հարձակում, վորպիսզի այդ դրոշակը բարձր պահած՝ առաջ գնաք և կանգնեցնեք ամբողջ աշխարհում, վորպեսզի պահպանեք նրան ամեն մի տատանումից. յեղեք պատրաստ.

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ: Կամենսկվ. Արժանավոր լենինականներ լինելու համար — յեղեք պատրաստ.

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ: Կամենսկվ. Հողթանակի համար մղվող պայքարում ձեր ավագ յեղբայրներին փոխարինելու համար — յեղեք պատրաստ.

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ:

Կամենեվ. Վճռական պայքարի, վերջնական հաղթանակի համար— յեղեք պատրաստ.

Պատանի լենինականներ. Միշտ պատրաստ. Վապոտին. Սուքք տրվում է ավազ պատկում ընկ. Բուխարինն. (ծափեր):

Բուխարին. Պրոլետարների զավակներ, աշխատավորների զավակներ, յես վողջունում եմ ձեզ այստեղ մեր Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի անունից: Ընկերներ, մեր կրտսեր բարեկամներ, մենք այսօր ընդունում ենք ձեր շարահանդեսը Կրեմլի պարսպի մոտ, պանծալի Կարմիր Հրապարակում, վորտեղ բարձրանում է մեր մեծ ուսոցիչ ընկ. Լենինի գամբարանը, վորտեղ գտնվում է մեռածների մեծ կոմունան, նրանց՝ վորոնք իրենց վոսկրները դրին, վորոնք պայքարեցին, վորպեսզի հիմքը դնեն այն կյանքի, յերբ չի լինի վոչ աղքատ, վոչ հարուստ, յերբ մարդն իր ամենափոքր հասակից կապրի լի կյանքով, կը շնչի լիքը կը ծքով: Մեր սերունդը դրել է այն հիմքը. և մեկը մյուսի յետեից գնում են մեզսից մեր ամենահավատարիմ ամենախիզախ, ամենակորովի մարտական ընկերները: Սակայն, ընկերներ, նրանք ևս, ովքեր գնացին, ովքեր հեռացան, խորապես հավատացած էյին, վոր նրանց փոխարինելու յես գալիս ել ավելի անհամար զորք: Մեզսից հեռացող յուրաքանչյուր տասնյակի փոխարեն գալիս են հարյու-

րավոր նոր, թարմ յերիտասարդ ուժեր: Յեվ այդ տեսակետից, ընկերներ, ամենաուրախալի յերևույթը, վոր մեզ հավատ է ներշնչում ապագայի վերաբերմամբ, — այդ դուք եք, նոր սերունդը, վոր մեկնում է մեզ իր միլիոնավոր ձեռքերը, և վորը կատարելու յես մեր ուսերին ընկած պարտականությունը: Դուք շարունակելու յեք մեր գործը. ձեզ վիճակվելու յես դեկավորել աշխատանքի ազատագրման համար պայքարող մեծ բանակը, և աղյուս աղյուսի յետեից շարելով, բարձրացնել այն շենքը, վոր սկսել է ավելի ավազ սերունդը: Ձեզ վիճակվելու յես մասնակցել այն մեծ ճակատամարտին, վորն ամենայն հավանականությամբ կը լինի ավելի զբանդիող, քան նրանք, վորոնց բովից անցավ ավազ սերունդը:

Ձեզ դուցե վիճակվի տեսնել այն պարաշրջանը, այն ժամանակը, յերբ մեր կարմիր դրոշակը հզարա կը ծածանվի ամենուրեք, — այժմյան զազուխների խուլ գյուղերում և կապիտալի հիմնական ամբոցների վրա:

Ընկերներ, մեծ պարտականություններ են դրված ձեր վրա, սակայն մենք բոլորս հավատացած ենք, վոր դուք կառաջնորդվեք այն հիմնական նշանաբանով, վորով մեր կուսակցությունն է առաջնորդվել, և կը կատարեք կուսակցության կողմից ձեր վրա դրվելիք պարտակա-

նությունները: Այդ մեծ պարապանակութիւններն կատարման, այդ մեծ ճակատամարտներին, այդ մեծ շինարարական աշխատանքներին, դուք, մեզ փոխարինողներդ, մեր պարծանքը, մեր հույսը, դուք, աժմյան լենինականներդ, — յեղեք պատրաստ. (ձայներ. «Հառա՛ջ, պատրաստ ենք»):

Վասյուտին. խոսքը պատկանում է ընկ. Ռիկովին:

Ռիկով. (ծափեր) Ընկ. Լենինի թոռներ, այսօր պատկանական կազմակերպութեան կյանքում մեծ տոն է. այսօր դուք յերգում եք ընդունում, այսօր դուք ընդունում եք ընկ. Լենինի ջոկատի անունը:

Ընկերներ, ձեր շարահանդեսը ձգված է այն պարսպի մոտ, վորտեղ իրենց փակրները դրին լավագույններն այն մարդկանցից, վորոնք զոհ բերին իրենց կյանքը հոկտեմբերյան հաղթութիւնը պարզևող բանվորական հեղափոխութեանը: Այստեղ ձեր առջև բարձրանում է ընկ. Լենինի դամբարանը. այստեղ, կյանքի ու մահվան այս հրապարակում, թոռներն ու պապերը խոստովան են տալիս միմյանց շարունակելու պայքարը և իր վախճանին հասցնելու այն:

Դուք, ընկ. Լենինի թոռներ, դուք հոկտեմբերյան հեղափոխութեան զավակներ, հիշեցեք, վոր սերունդներն իրենց կյանքը զոհեցին Հոկ-

տեմբերի համար, առաջին հաղթանակի համար ձգված պայքարում:

Դուք, ընկ. Լենինի թոռներ, դուք կողովեք այն հաղթանակից, վոր տարել ենք այժմ, բայց դուք պետք է շարունակեք այդ հաղթանակը, դուք պետք է առնեք հին սերնդի ձեռքից կարմիր դրոշը և բարձրացնեք նրան այնպես, վոր տեսանելի լինի ամբողջ աշխարհին, բոլոր յերկրներում: Այստեղ, այս պարսպի մոտ, վորտեղ հանգչում են հեղափոխութեան լավագույն զոհերը, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան լավագույն գործիչները, բանվոր դասակարգի լավագույն կազմակերպիչները, այստեղ, այս պարսպի մոտ պատանի կոմունիստները պետք է յերգվեն, վոր նրանք պատրաստ կըլինեն վերցնելու այդ դրոշը և ուժեղ ձեռքով կանգնեցնելու նրան խոշոր յերկրներում, վորպես հաղթութեան դրոշ:

Ընկերներ, դուք վերանվանվում եք ընկ. Լենինի անվան ջոկատներ, ընկ. Լենինը սիրում էր յերեխաներին այն ուրախութեան, այն հանգստի համար, վոր նա գտնում էր նրանց շրջանում: Սակայն ինչ սիրում էր յերեխաներին և այն պատճառով, վոր նրանք կը հասցնեն նրա սիրած գործն իր վախճանին և վերջնականապես կը հաստատեն յերկրի վրա այն թագավորութիւնը,

վորի համար ապրեց, պայքարեց և մեռավ Վլադիմիր Իլյիչը:

Ընկեր Լենինի թոռներ, յեղեր պատրանստ, Լենինականներ. Միշա պատրանստ:

Վասյուտին. Ընկերներ, վողջունի խոսք ունի ընկ. Տրոցկին. (բացականչություններ. «ուռ»), յերկար շարունակվող ծափեր):

Տրոցկի. Պատանի ընկերներ, լենինականներ, այս հրապարակում, այն ժամին, յերբ դուք վերանվանվում եք ճնշվածների ու զրկվածների մեծ առաջնորդի անունով, — հավաքվել են մի քանի սերունդներ, վորոնք դիմում են դեպի հաղթանակ:

Այստեղ հանգչում են պայքարում ընկածները, այստեղ կանգնած են այն կուսակցության համագումարի պատգամավորները, վոր ստեղծել և Վլադիմիր Իլյիչը, վորի անունը դուք այսօրվանից յուրացրիք, այն կուսակցության, վոր դեկավարում է ամբողջ յերկիրը: Այստեղ վողջունում է ձեզ Կոմյերիտիությունը. նրա ներկայացուցիչները վողջունեցին ձեզ, և նրանք կենդանի կամուրջ են կազմում Լենինի կուսակցության և լենինյան նորակոչների, պատկոմների միջև: Հիշենք, վոր կուսակցության, Կոմյերիտիության և ադելիվ յերիտասարգության — աշխատավորության զավակների առջև զրկված է յերկրի վրա համայն մարդկության յեղրայրության խ-

կական կարգ հաջաաակելու խնդիրը: Ընկ. Լենինը մեզ կտակել է ստեղծել այնպիսի դրուժյուն, յերբ չի լինի սոբկություն, չքափորություն, խավար, յերբ մարդը մարդուն չի ճնշի, յերբ մարդը մարդու համար յեղբայր և քույր կը լինի աշխատանքի ու բավականության ժամին: Մենք դեռ նոր խորտակեցինք բուրժուական կապանքները, փշրեցինք կանգալները, սակայն դեռ սարսափելի յեն ժողովրդական մարմնի վրայի վերքերն ու խոցերը, դեռ ուշ կը լավանան նրանք: Դուք, պատկոմներ, լենինականներ, մեծ աշխատանք պետք է կատարեք բարձրացնելու այս յերկիրը մինչև նրա ամենախուլ գյուղերը, բարձրացնելու նրա անտեսությունը, բարձրացնելու նրա գիտությունը, նրա կուլտուրան: Իսկ զրա համար, յնչպես կտակել է ձեզ ընկ. Լենինը, — սովորեցեք, գիտություն ու փորձառություն ձեռք բերեք, վորովհետև ձեր «միշտ պատրանստ» լոզունգը միայն այն ժամանակ գործով կարդարանա, յերբ դուք աջնվաբար, ի նկատի ունենալով մեր մեծ նպատակը, կոզտագործեք ձեր պատանեկական, յերիտասարգական տարիները՝ փորձառություն և գիտություն ձեռք բերելու համար: Հիշեցեք, վոր լենինականները ծնվում են դարերի ընթացքում մի անդամ, վոչ վոք չի կարող Լենին գառնալ, սակայն լենինական գառնալ ամեն վոր կարող է: Իրա համար պետք է

պարզ ըմբռնել բանվոր դասակարգի ուղիներն ու նպատակները, հարկավոր և պայծառ, նախապաշարմունքից չմթաղնած հայացք, հարկավոր և ազնիվ ու արի սիրտ պայքարը շարունակելու համար:

Այդ պայքարի համար, վոր սպասում է ձեզ, ընկերներ, պատանի բարեկամներ, յեղեք պատրաստ (ձայներ «միշտ պատրաստ»), յերկարատեմ ծափեր):

Կլարա Յետկին. (Թարգմանում է ընկ. Տառլեն) Ընկերներ, Կլարա Յետկինը վողջունելով ձեզ, ասում է, վոր այսօր նրա կյանքի ամենալեքշանիկ օրն է, յերբ նա տեսնում է, թե ինչպես հպարտ, բարձրացրած զրոշակներով, կանգնած էք դուք հանդիսավոր շարքերով:

Ընկերներ, Կլարա Յետկինն ասում է, վոր դուք հեղափոխության գավակներն էք, վոր դուք յուրացրել էք ձեր մեծ ուսուցչի լոգունգը, սակայն դուք պետք է կասուցանեք այն կյանքը, վորի նախակարողեան ու ղեկավարն էր մեծ ուսուցիչը:

Ընկ. Կլարա Յետկինն իր հակիրճ ճառով վողջունում է ձեզ և ասում, վոր դուք միշտ որինակ ծառայեք մնացած ամբողջ աշխարհին. — յեղեք պատրաստ.

Լենինականներ. Միշտ պատրաստ, կեցցե Կլարա Յետկինը:

Փելիքս Կոն. Պատանի ընկերներ, դուք յեկել էք այստեղ, այս հրապարակը, վորտեղ հավաքված են հեղափոխության լավագույն ուժերը. դուք յեկել էք այստեղ մեր մեծ ուսուցչի դամբարանի մոտ, դուք յեկել էք մեծ հեղափոխականների գերեզմանների մոտ, և հենց դրանով դուք արդեն ասացիք, վոր դուք պատրաստվում էք այն բոլոր կռիվների համար, վորոնք սպասում են ձեզ, վոր դուք ճիշտ բովանդակություն կը մտցնեք ձեր լոգունգի մեջ, դուք կյանք կը մտցնեք նրա մեջ: Ինձ, վորպես ավագագույներից մեկին, հանձնարարված է հանդիսավոր խոստում առնել ձեզնից: Յես ասում եմ ձեզ, ընկեր պատկոմներ, պատրաստ յեղեք այդ հանդիսավոր խոստմանը. («միշտ պատրաստ»):

Ընկերներ, կրկնեցեք իմ յետնից (կարդում է խոստման բնագիրը):

ՊՍՏԿՈՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄԸ

«Յես, ՄԽՀՄ պատկոմն, իմ ընկերների առջ, հանդիսավոր խոստում եմ տալիս, վոր՝

1) Ամուր կը պաշտպանեմ բանվոր դասակարգի դորժը նրա՝ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների ազատագրման համար մղելիք պայքարում:

2) Ազնվորեն ու անշեղ կը կատարեմ պատ-

կամական բոլոր որենքներն ու սովորաթյունները և Իլիչի ավանդները»: Պատկոմներ, այս հանդիսավոր խոստումը ձեր անունից յեւ տալիս եմ XIII-րդ համագումարի նախադանության. (ձայներ «ուս»):

Նամենեմ. Այս հանդիսավոր խոստումն ընդունում ե համագումարը: Պատանի ընկեր լենինականներ, այս հանդիսավոր խոստումը կատարելու համար, յեղեք պատրաստ. («միշտ պատրաստ»):



364 —
 364 — 6,5 122
 100 — X 5
 670

$$X: 364 = 100: 6,5$$

$$X = \frac{364 \cdot 100}{100 \cdot 6,5} = \frac{670}{6,5} \% \text{ որպես}$$

« Ազգային գրադարան



ML0186940

